ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. 2020-2021 ուս. տարվա բակալավր 1-ին կուրսի 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:
2. Ընթացիկ հարցեր

   ա/ Առկա բակալավր 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների թեմաների բաշխման գործընթացի կազմակերպման մասին:

   բ/ 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասացուցակի մասին:

   գ/ 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի միջոցառումների պլանի հաստատման մասին:

1. ԼՍԵՑԻՆ - 2020-2021 ուս. տարվա բակալավր 1-ին կուրսի 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Այսօր քննարկելու ենք միայն բակալավր 1-ին կուրսի 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների փաթեթները: Խնդրում եմ ներկայացրեք առարկայի անվանումը, ֆակուլտետն ու մասնագիտությունը, որտեղ դասավանդվելու է առարկան, ինչ փոփոխություններ եք կատարել փաթեթում՝ միաժամանակ նշելով, թե այդ փոփոխությունները որքանով են համապատասխանում առցանց դասավանդման եղանակին, որքանով են կատարելագործում առարկայի վերջնարդյունքներին միտված բովանդակությունը և որքանով են հաշվի առնվում տվյալ մասնագիտության առանձնահատկությունները:

Զ. Ասատրյան – Դասավանդելու եմ «Մանկավարժություն» առարկան ՍԿ ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության բակալավր 1-ին կուրսում: Առարկային տրված է 30 ժամ լսարանային աշխատանք, որից 20 ժամը

դասախոսություն, 10 ժամը գործնական աշխատանք: Առցանց ուսուցման առանձնահատկությունները հաշվի առնելով՝ մասամբ փոփոխել եմ գործնական աշխատանքի մեթոդները: Աշխատանք զույգերով, գրավոր շրջանաձև քննարկում, նախագիծ, դերային խաղ մեթոդները փոխարինվել են ինտերակտիվ քննարկում, տեսաներկայացում, մտագրոհ, բանավեճ մեթոդներով: Վերանայել եմ 2-րդ միջանկյալ ստուգման՝ թղթապանակի թեմաները: Գրականության ցանկում ավելացրել եմ ժամանակակից աղբյուրներ:

Ա. Հովհաննիսյան - Դասավանդելու եմ «Կրթության և մանկավարժական մտքի պատմություն» առարկան ԿՀՍ ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 1-ին կուրսում: Առարկային տրված է 45 ժամ լսարանային աշխատանք, որից 30 ժամը դասախոսություն, 15 ժամը գործնական աշխատանք: Վերանայել և խմբագրել եմ ամբողջ փաթեթը: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, ընտրել ենք հետևյալ գործնական աշխատանքի մեթոդները՝ շրջագայություն պատկերասրահում, էսսե, բանավեճ, դերային խաղ, վեննի դիագրամ, կրկնակի գրառումների օրագիր, 5 բոպեանոց շարադրանք, պրիզմա:

Ս. Ջանիկյան - Դասավանդելու եմ «Մանկավարժություն» առարկան ՍԿ ֆակուլտետի «ՆԴ մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության բակալավր 1-ին կուրսում: Առարկային տրված է 60 ժամ լսարանային աշխատանք, որից 40 ժամը դասախոսություն, 20 ժամը գործնական աշխատանք: Փաթեթը վերանայել եմ և նախորդ կիսամյակի առցանց դասավանդման փորձը հաշվի առնելով՝ որոշ գործնական աշխատանքներ փոփոխել եմ: Հիմնական գործնական աշխատանքներն են սեմինար, էսսե, քննարկում, բանավեճ, որոնց միջոցով ապահովելու ենք ՄԿԾ-ի 13 վերջնարդյունք:

Ն. Կարապետյան - Դասավանդելու եմ «Մանկավարժություն» առարկան Կուլտուրայի ֆակուլտետի «Պարարվեստ» մասնագիտության բակալավր 1-ին կուրսում: Առարկային տրված է 30 ժամ լսարանային աշխատանք, որից 22 ժամը դասախոսություն, 8 ժամը գործնական աշխատանք: Փոփոխել եմ միջանկյալ ստուգման ձևերից մեկը՝ 1-ին միջակյալ գրավոր ստուգումը փոխարինել եմ ռեֆերատով: Ավելացրել եմ 2 նոր մեթոդ՝ նախագծի և մամուլի ուսումնասիրության մեթոդները: Քանի որ պարարվեստի բաժնում

է դասավանդվելու առարկան, նախատեսել ենք համեմատական վերլուծություններ իրականացնել ազգային պարերի վերաբերյալ, բացահայտել դրանց կրթա-դաստիարակչական, արժեքային առանձնահատկությունները: Իրականացնելու ենք նաև հետազոտական աշխատանք: Ընդհանուր առմամբ ապահովում ենք՝ Ա մակարդակում 3 վերջնարդյունք, Բ մակարդակում 4 վերջնարդյունք և Գ մակարդակում 3 վերջնարդյունք:

Գ. Աղուզումցյան - Դասավանդելու եմ «Մանկավարժություն» առարկան ԿՀՍ ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն, սոցիալական աշխատանք, սոցիոլոգիա» մասնագիտությունների բակալավր 1-ին կուրսերում: Առարկայական նկարագիրը և թեմատիկ տրոհումը կազմել ենք պահանջվող ձևաչափին համապատասխան: Առարկայի նպատակը և խնդիրները բխում են միմյանցից: Գործնական աշխատանքի հիմնական մեթոդներն են՝ սեմինար, բանավեճ երեխաների իրավունքների վերաբերյալ, նախագծային մեթոդ, վենների դիագրամ, էսսե, որոնք ապահովում են տրված վերջնարդյունքները:

Ա. Թոփուզյան – Փաթեթներում պետք է հստակ երևա որ մասնագիտության համար է նախատեսված ծրագիրը, տվյալ մասնագիտության քանի վերջնարդյունքներն են ապահովում ընտրված թեմաներն ու գործնական աշխատանքները և ընտրված մեթոդները: Որքանով են այդ բոլորը հարմարեցված առցանց ուսուցման եղանակին: Քանի որ այսօր գիտելիքահեն ուսուցման եղանակից դպրոցն անցնում է կոմպետենտային ուսուցման եղանակի, մենք պետք է մեր ուսանողներին ոչ միայն սովորեցնենք, այլև նրանցում ձևավորենք այն կոմպետենցիաները, որոնք պետք է ունենա ուսուցիչը: Մեր փաթեթներում ներկայացված գործնական աշխատանքները պետք է ուղղված լինեն 21-րդ դարի հմտությունների ձևավորմանը: Մասնավորապես, քննադատական մտածողության, համագործակցային կարողությունների ձևավորմանը, տվյալ մասնագիտության հիմնախնդիրները գտնելուն ու դրանց լուծման ուղիները որոշելուն, ճիշտ որոշում կայացնելու և ընտրություն կատարելու, ուսանողի նախաձեռնողականությունը, ստեղծագործականությունը և ինքնուրույնությունը ապահովելուն: Ցանկացած կուրսում ցանկացած առարկայի դասավանդման ընթացքում մենք պետք է նախատեսենք փոքրիկ հետազոտական աշխատանքներ, որպեսզի

ուսանողները սովորեն վերլուծել, համեմատություն և եզրակացություն անել: Էսսեներ տվեք, քարոզների մրցույթներ անցկացրեք, որ գրավոր և բանավոր խոսքը զարգանա: Խնդրում եմ այս տեսանկյունից նորից վերանայեք Ձեր փաթեթները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Կրկին վերանայել բոլոր փաթեթները՝ հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները:

2. Ընթացիկ հարցեր.

ա/ ԼՍԵՑԻՆ – Առկա բակալավր 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների թեմաների բաշխման գործընթացի կազմակերպման մասին:

Ա. Թոփուզյան – Ըստ 2020-2021 ուս. տարվա դասաբաշխման, մեր ամբիոնի գծով ավարտական աշխատանք են գրում ՍԿ և ԿՀՍ ֆակուլտետների առկա բակալավր 4-րդ կուրսի 23 ուսանող: Ավարտական աշխատանքների համար Ձեր կողմից ներկայացված թեմաներից մենք արդեն ընտրել ենք այն թեմաները, որոնք պետք է առաջարկեք ուսանողներին: Խնդրում եմ ըստ Ձեր ծանրաբեռնվածության, համապատասխան կուրսից ընտրել ուսանողներին և փոխանցել թեմաները՝ մինչև սեպտեմբերի 18-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հանձնարարել Գ. Հարությունյանին համակարգել ավարտական աշխատանքների թեմաների բաշխման գործընթացը ԿՀՍ ֆակուլտետում, Ա. Դալլաքյանին՝ ՍԿ ֆակուլտետում: 2. Ավարտական աշխատանք գրող ուսանողների, ղեկավարների և թեմաների ցանկը ներկայացնել ամբիոն մինչև 18.09.2020թ.:

բ/ ԼՍԵՑԻՆ – 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասացուցակի մասին:

Ա. Թոփուզյան – Խնդրում եմ կապվել համապատասխան դեկանատների հետ, հստակեցնել Ձեր դասացուցակը և ուղարկել ամբիոն մինչև 10.09.2020թ.

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել Է. Յարազյանին 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի դասացուցակը կազմել մինչև 15.09.2020թ.-ը:

գ/ ԼՍԵՑԻՆ - 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի միջոցառումների պլանի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Պատրաստ է 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը: Խնդրում եմ ծանոթացեք և եթե չկան լրացումներ, առաջարկում եմ հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

02.09.2020թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակում բակալավրիատում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:

Գ. Եգանյան - «Սոցիալական մանկավարժություն» առարկայի փաթեթը դասավանդվում է ԿՀՍ ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 2-րդ կուրսում: Փաթեթում ներառված թեմաները, դասախոսությունների և գործնական պարապմունքների բովանդակությունը համապատասխանում են դասընթացի նպատակին և ապահովում են վերջնարդյունքները: Ունենք 7 գործնական աշխատանք, որոնցից յուրաքանչյուրը ապահովում է 3 վերջնարդյունք: Օրինակ՝ ԿԱՊԿՈՒ երեխայի հետ աշխատող սոցիալական մանկավարժի մոդելի կազմում, որը ապահովում է Ա1, Բ2, Գ1 վերջնարդյունքները: Գրականության ցանկը ներառում է 2000թ.-ից հետո հրատարակված գրքեր:

Ա. Հովհաննիսյան - «Մանկավարժական հաղորդակցում» առարկայի փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 2-րդ կուրսի համար: Փաթեթը համապատասխանում է անհրաժեշտ բոլոր չափանիշներին: Դասընթացի կրթական ելքային վերջնարդյունքները բխում են դասընթացի նպատակից, գործնական աշխատանքները՝ ելքային վերջնարդյունքներից: Հիմնական գործնական աշխատանքներն են՝ զրույց, բանավեճ, դերային խաղ, ֆիլմի դիտում և քննարկում և այլն:

Մ. Ասատրյան - «Մանկավարժություն» առարկայի փաթեթը նախատեսված է ֆիզիկա, տեխնոլոգիա և ձեռնարկչություն, մաթեմատիկա, ինֆորմատիկա բաժնի բակալավր 2-րդ կուրսի համար: Առարկայական նկարագրում տեղ գտած կրթական վերջնարդյունքները համապատասխանում են վերոբերյալ մասնագիտության ծրագրի կրթական ելքային արդյունքներին, որոնք լուծվում են թեմատիկ տրոհման մեջ ներկայացված գործնական պարապմունքների ընթացքում: Գործնական պարապմունքների ժամանակ ընտրված

մեթոդներն ու առաջադրանքները ուղղված են լուծելու կրթական ելքային արդյունքները: Դասախոսության յուրաքանչյուր թեմայից հետո առկա են հետադարձ կապ ապահովող առաջադրանքներ, ինքնաստուգման հարցեր, հիմնական ու լրացուցիչ գրականություն:

Գ. Հակոբյան - «Մանկավարժություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է ԳԿ ֆակուլտետի բակալավր 2-րդ կուրսի համար: Դասընթացը ներառում է 22 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական աշխատանք: Դասախոսությունների նյութերը համապատասխանում են առաջադրված թեմաներին և թեմատիկ տրոհմանը: Առցանց ուսուցման առանձնահատկություններից ելնելով՝ ընտրվել են այնպիսի մեթոդներ, որոնք ուսանողին հնարավորություն կտան դրսևորվել: Օրինակ՝ բանավեճ, առարկայական չափորոշիչների քննարկում և այլն:

Մ. Գևորգյան - «Մանկավարժություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է ՕԼ ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» բաժնի բակալավր 2-րդ կուրսի համար: Առարկայական նկարագրում սահմանված կրթական վերջնարդյունքները համապատասխանում են ՄԿԾ-ի ելքային արդյունքներին, որոնք լուծվում են թեմատիկ տրոհման մեջ՝ գործնական պարապմունքների ընթացքում: Հիմնական գործնական աշխատանքներն են՝ կլոր սեղան, դեբատ, դասի պլանի կազմում:

Ն. Կարապետյան - «Մանկավարժություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է ԿՔԱ ֆակուլտետի բակալավր 2-րդ կուրսի համար: Առարկայական նկարագիրը գրված է ըստ նկարագրի ձևակերպմանը ներկայացվող պահանջների: Թեմատիկ տրոհումը համապատասխանում է առաջադրված պահանջներին: Գործնական աշխատանքներն են՝ բանավեճ, մոդելավորում, հետազոտական աշխատանք, կենսաբանություն, քիմիա կամ աշխարհագրություն առարկաների դասի պլանի կազմում առցանց ուսուցման պայմաններում:

Ա. Բաղդասարյան - «Մանկավարժություն» առարկայի փաթեթը նախատեսված է «Պատմություն» և «Հասարակագիտություն» մասնագիտությունների բակալավր 2-րդ կուրսի համար: Առարկայի ուսումնամեթոդական փաթեթի բովանդակային բոլոր բաղադրիչներն ու նկարագրիչներն առկա են: Առարկայական նկարագիրը հիմնականում գրված է ըստ նկարագրի ձևակերպմանը ներկայացվող պահանջների: Դասընթացի թեմատիկ տրոհումը համապատասխանում է առաջադրված պահանջներին: Գործնական

աշխատանքներն են՝ տեսանյութի դիտում և քննարկում, խճանկար, նախագիծ, բանավեճ, էսսե:

Ա. Մանուկյան - «Մեդիակրթություն» առարկայի փաթեթը նախատեսված է «ՆԴ մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության բակալավր 2-րդ կուրսի համար: Դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 45 ժամ, որից 30 ժամ դասախոսություն, 15 ժամ գործնական աշխատանք: Հաշվի առնելով մասնագիտության առանձնահատկությունները փաթեթում ներառել եմ տարրական դպրոցի և նախադպրոցական երեխայի մտածողությանը համապատասխանող մեդիատեխնոլոգիաներ: Գործնական աշխատանքների ընթացքում հիմնականում կիրառում ենք հետևյալ մեթոդները՝ մուլտֆիլմերի դիտում և քննարկում, ՛՛Սովորում ենք վարպետներից՛՛ տեխնոլոգիան, տեսանյութերի պատրաստում և այլն:

Հ. Թադևոսյան - «Սոցիալական մանկավարժություն» դասընթացի փաթեթը նախատեսված է ԿՀՍ ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» բաժնի բակալավր 3-րդ կուրսի համար: Դասընթացի կրթական ելքային արդյունքները, որոնք բխում են մասնագիտության մասնագրից ձևավորվում են գործնական և տեսական դասաժամերի ընթացքում: Գործնական աշխատանքները համապատասխանեցրել ենք առցանց ուսուցման չափանիշներին: Նախատեսում ենք իրականացնել փոքրիկ հետազոտություններ՝ օգտագործելով Google Classroom հարթակի համապատասխան գործիքները հարցաթերթիկների կազմման և արդյունքների վերլուծության համար, երեխաների իրավունքների վերաբերյալ սոցիալական հոլովակների դիտում, քննարկում և այլն:

Գ. Հարությունյան - «Ընտանիքի սոցիալ-մանկավարժական աջակցություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 3-րդ կուրսի համար: Փաթեթը համապատասխանում է անհրաժեշտ բոլոր չափանիշներին: Դասընթացի համար հատկացված է 30 դասախոսություն և 15 գործնական ժամ: Գործնական աշխատանքներն են՝ սեմինար, հետազոտական աշխատանք, ինքնավերլուծություն, մանկավարժական իրավիճակի քննարկում և վերլուծություն, բանավեճ, տեսանյութի դիտում և քննարկում և այլն:

Ն. Մարկոսյան - «Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկա և տեխնոլոգիա» առարկայի փաթեթը նախատեսված է ԿՀՍ ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 3-րդ կուրսի համար:

Դասախոսությունների և գործնական պարապմունքների քանակը համապատասխանում է ուսումնական պլանով առարկայի համար նախատեսված լսարանային ժամերին: Գործնական աշխատանքներն են՝ մանկավարժական իրավիճակների վերլուծություն, սոցիալական մանկավարժի աշխատանքի ծրագրի կազմում, հետազոտական աշխատանք, բանավեճ:

Ա. Մանուկյան - «Ընտր./դաս. Սոցիալական մեդիաներ» առարկայի փաթեթը նախատեսված է ԿՀՍ ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 4-րդ կուրսի համար: Դասընթացը նոր է, առարկայի բովանդակության մեջ ներառել եմ մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները սոցիալական ցանցերում, որի ընթացքում սովորեցնելու եմ, թե ինչպես կարելի է սոցիալական հարցումներ և հետազոտություններ իրականացնել համացանցում և առհասարակ մեդիադաշտում: Անդրադառնալու ենք սոցիալական ցանցերում առկա խնդիրներին և դրանց լուծման տարբերակներին: Դասընթացն ավարտելու ենք հետազոտական աշխատանքով:

Ա. Թոփուզյան – Այս տարի յուրաքանչյուր դասախոս ինքը ներկայացրեց իր կազմած փաթեթը, ուստի ի նկատի ունեցեք, որ Դուք եք պատասխանատու Ձեր փաթեթի ամբողջականության, դասընթացի նպատակի, խնդիրների, վերջնարդյունքների, գործնական աշխատանքների մեթոդների ընտրության և վերջնարդյունքների համապատասխանության և որակի համար: Կարծում եմ անհրաժեշտ է հարստացնել մեթոդական գործիքակազմը, մասնավորապես, օգտագործեք մանկավարժական իրավիճակների վերլուծություն, էսսե, քեյս սթադի, նախագծային և այլ հետազոտական բաղադրիչը հարստացնող մեթոդներ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակում բակալավրիատի 2-4-րդ կուրսերում դասավանդվող առարկաների փաթեթները՝ հաշվի առնելով ներկայացված առաջարկությունները դրանց բարելավման ուղղությամբ:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

07.09.2020թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակում մագիստրատուրայում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:

Գ. Աղուզումցյան - «Ազատ ժամանցի կազմակերպման մեթոդիկա» առարկան նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության ՄԿԾ-ի առաջին կուրսի համար:

Փաթեթը մշակելիս հաշվի եմ առել «Սոցիալական մանկավարժություն» և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների առանձնահատկությունները՝ առաջադրանքների բովանդակությունը դարձնելով թիրախային: Գործնական աշխատանքներն են՝ բանավեճ, սցենարի մշակում, դերային խաղ:

Լ. Պողոսյան - «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է գրեթե բոլոր ֆակուլտետներում դասավանդելու համար: Փաթեթը մշակել են Լ. Պողոսյանը, Ս. Սիսյանը, Ի. Բաբայանը միասին:

Դասընթացի բովանդակությունը համապատասխանում է ինչպես մասնագիտությունների պահանջներին, այնպես էլ ներկայացված կրթական վերջնարդյունքներին: Փաթեթում կատարել ենք որոշակի փոփոխություններ՝ այն համապատասխանեցնելով առցանց դասավանդման գործընթացին:

Հիմնական գործնական աշխատանքներն են՝ մոդելավորում, դիտումների վերլուծություն, հարցումների վերլուծություն, քեյս սթադի:

Ա. Թոփուզյան – Ձեր ներկայացրած գործնական աշխատանքները կատարելուց առաջ ուսանողներին սովորեցրեք հարցաթերթիկ կազմել, որը կունենա հստակ նպատակ և ներկայացված հարցերը կնպաստեն այդ նպատակի իրականացմանը: Սովորեցրեք նաև թեզի նպատակը ճիշտ սահմանել, դրանից բխեցնել խնդիրները, որոնց պատասխանները

պետք է ստանալ եզրակացություններում: Այս առարկայում դասավանդվող յուրաքանչյուր թեմա պետք է ունենա հետազոտական բաղադրիչ:

Ս. Սիսյան - «Մանկավարժական արժեբանություն» առարկան նախատեսված է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրսի համար: Ըստ ուսումնական պլանի 22 ժամ տրված է դասախոսություններին, 8 ժամ՝ գործնական աշխատանքներին: Գործնական աշխատանքներն են՝ «Արդի կրթության համակարգում գերակայող մանկավարժական արժեքները» թեմայով կլոր սեղան, նախագծում, տարրական դպրոցի ժամանակակից ուսուցչի մանկավարժական արժեհամակարգի մոդելի ստեղծում, «Բարոյական արժեքների տեղն ու դերը տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական գործունեության մեջ» թեմայով բանավեճ:

Ա. Թոփուզյան – Ավելացրեք էսսե, ինքնավերլուծություն, ամեն մեկը թող մոդելավորի իր արժեքային համակարգը:

Հ. Թադևոսյան - «Ծերերի խնամքի կազմակերպման սոցիալ-մանկավարժական ապահովում» առարկայի փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրսի համար: Դասախոսությունների և գործնական պարապմունքների քանակը համապատասխանում է ուսումնական պլանով առարկայի համար նախատեսված լսարանային ժամերին: Գործնական աշխատանքները չորսն են՝ հետազոտական աշխատանք, որի նպատակն է ուսումնասիրել, թե սոցիալ-մանկավարժական տեսանկյունից ծերերի խնամքի կազմակերպման ինչ մոդելներ են գործում տարբեր երկրներում և Հայաստանում, խորհրդատվություն, մոդելավորում, նախագծում:

Ի. Բաբայան - «Բարձրագույն և մասնագիտական դպրոցի մանկավարժություն» դասընթացը նախատեսված է մագիստրատուրա 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում դասավանդելու համար: Դասընթացի լսարանային ընդհանուր ծավալը կազմում է 24 ժամ, որից 18 ժամը տեսական է, 6-ը՝ գործնական: Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Գործնական աշխատանքներն են՝ սոցիալական հարցումներ և արդյունքների վերլուծություն, «Ուսուցման գործընթացի առանձնահատկությունները

բուհում» թեմայով կլոր սեղան, «Մասնագիտական կրթության որակի ապահովումը բուհում» թեմայով բանավեճ:

Ա. Դալլաքյան – «Տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտական զարգացման հիմունքներ» առարկան նախատեսված է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի համար: Դասընթացի լսարանային ընդհանուր ծավալը կազմում է 24 ժամ, որից 18 ժամը դասախոսություն է, 6-ը՝ գործնական: Գործնական աշխատանքներն են՝ տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական գործունեության մոդելավորում, «Կրթության ակմեոլոգիական մոտեցում» թեմայով բանավեճ, «Հարափոփոխ աշխարհում տարրական դպրոցի ուսուցչի ինքնակրթությունը» թեմայով կլոր սեղան:

Ա. Թոփուզյան – Ավելացրեք ինքնակրթության սեփական պլանի մշակում, տարրական դպրոցի ուսուցչի կոմպետենցիաների մոդելավորում: Կարծում եմ այս առարկայի շրջանակներում ուսանողները, ովքեր նաև աշխատող դասվարներ են, պետք է համեմատեն ինչ խնդիրներ ունի այսօր տարրական դպրոցը և այդ խնդիրները լուծելու համար ինչ կոմպետենցիաներ ենք մենք նրանց տալիս:

Ա. Դալլաքյան - «Անդրագոգիկա» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» և «Երաժշտական կրթություն, կերպարվեստ» մասնագիտությունների մագիստրատուրա 2-րդ կուրսի համար: Առարկայական նկարագիրը ներկայացված է պահանջվող ձևաչափով: Դասընթացի առարկայական նկարագրի թեմաները, դասախոսությունները և գործնականների քանակը համապատասխանում են ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակներին:

Ներկայացված 3 գործնական աշխատանքներն են՝ նախագծային աշխատանք, մոդելավորում, դերային խաղ՝ թրեյնինգ:

Լ. Նազարյան - «Մանկավարժական մարդաբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը վերանայել ենք Ա. Թոփուզյանի հետ: Այն նախատեսված է գրեթե բոլոր ֆակուլտետներում դասավանդելու համար: Առարկայական նկարագիրը կազմված է նոր պահանջներին համապատասխան: Առարկայի բովանդակությունը

համապատասխանում է ինչպես մասնագիտությունների պահանջներին, այնպես էլ ներկայացված կրթական վերջնարդյունքներին: Հիմնական գործնական աշխատանքներն են՝ քարոզ, դաս-դատ, կլոր սեղան: Ներկայացված գործնական աշխատանքների թեմաները տարբեր են, հաշվի է առնված տվյալ մասնագիտության ուղղվածությունը:

Հ. Թադևոսյան - «Սոցիալ-մանկավարժական խորհրդատվության կազմակերպում» ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի համար: Գործնական աշխատանքները երեքն են, որոնք դերային խաղ-խորհրդատվություններ են տարբեր ոլորտների համար: Նպատակն է ուսանողներին ծանոթացնել խորհրդատվության կազմակերպման կանոններին, սկզբունքներին, երաշխավորվող մոտեցումներին:

Մյուսը «Սոցիալ-մանկավարժական գործունեության առանձնահատկությունները հատուկ և առողջապահական հիմնարկներում» առարկայի ուսումնամեթոդական փաթեթն է, որը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի համար: Դասընթացի շրջանակներում ներկայացնում ենք սոցիալ-մանկավարժական գործունեության առանձնահատկությունները 3 հիմնական հաստատություններում՝ զինվորական ստորաբաժանումներում, քրեակատարողական և առողջապահական հիմնարկներում: Հիմնական գործնական աշխատանքներն են՝ հետազոտական աշխատանք, մոդելավորում, սոցիալական հոլովակների դիտում և քննարկում, դերային խաղ-խորհրդատվություն՝ հաշվի առնելով թիրախային խմբերի առանձնահատկությունները:

Ա. Թոփուզյան – Մեկ անգամ ևս ուզում եմ կրկնել, որ գործնական աշխատանքները պետք է միտված լինեն դասընթացի վերջնարդյունքների ապահովմանը, մոռանում եք հետազոտական բաղադրիչի մասին /Աղուզումցյան, Սիսյան, Բաբայան, Դալլաքյան, Նազարյան/: Ինչ վերաբերում է ‹‹Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանությանը›› այն պետք է անմիջականորեն ծառայի թեզը պատրաստելուն: Ուրեմն շատ անհատական պետք է լինի, ուստի մեթոդներն էլ անհատական պետք է լինեն, բխեն թեմայի նպատակից, ուրեմն մեթոդների մեծ խումբ պետք է առաջադրենք, որ ուսանողը ընտրի:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակում մագիստրատուրայում դասավանդվող առարկաների փաթեթները՝ հետագայում դրանք անընդհատ բարելավելու պայմանով:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

09.09.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Մանկավարժական մասնագիտական կրթության բարելավման ուղղությամբ առաջարկությունների մասին:
2. «Մանկավարժություն» առարկայի ծրագրի մասին:
3. «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» խորագրով գիտաժողովի մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Մանկավարժական մասնագիտական կրթության բարելավման ուղղությամբ առաջարկությունների մասին:

Ա. Թոփուզյան – Մենք ստացել ենք Ձեր առաջարկությունները մանկավարժական մասնագիտական կրթության բարելավման ուղղությամբ: Յուրաքանչյուրիդ մոտ էլ կային հետաքրքիր ու կարևոր առաջարկություններ, որոնք ընդհանրացրել ենք և որպես ամբիոնի առաջարկություններ ներկայացնում ենք Ձեզ: Խնդրում ենք նայել:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մանկավարժական մասնագիտական կրթության բարելավմանն ուղղված ամբիոնի դասախոսների առաջարկությունները /կցվում է/: Դրանց կատարման պատասխանատվությունը դնել ամբիոնի որակի հանձնաժողովի վրա՝ ղեկ. Լ. Պողոսյան:

2. ԼՍԵՑԻՆ - «Մանկավարժություն» առարկայի ծրագրի մասին:

Ա. Թոփուզյան – Ինչպես գիտեք ամբիոնում ստեղծվել է «Մանկավարժություն» առարկայի ծրագրի մշակման հանձնաժողով, որի անդամները պետք է մշակեն առարկայի ծրագիր համապատասխանաբար մեկ, երկու և երեք կիսամյակների համար՝ ըստ նախապես հաստատված սկզբունքների: Ծրագիրը մշակելիս խնդրում եմ նաև հաշվի առնել որոշ դպրոցների տնօրենների հավաքական առաջարկությունները ուսուցիչների պատրաստման վերաբերյալ, որը մեզ է փոխանցել տիկին

Մարտիրոսյանը: Առաջարկում եմ մշակված ծրագրերի 1-ին քննարկումն իրականացնել ս/թ. հոկտեմբեր ամսին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել «Մանկավարժություն» առարկայի ծրագրի մշակման հանձնաժողովին ներկայացնել իրենց մշակած ծրագրերը մինչև ս/թ. հոկտեմբերի 10-ը:

3. ԼՍԵՑԻՆ - «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» խորագրով գիտաժողովի անցկացման մասին:

Ա. Թոփուզյան – Ինչպես գիտեք ամբիոնը կազմակերպում է գիտաժողով՝ «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» խորագրով: Առաջարկում եմ հաստատել

Գիտաժողովի հետևյալ ուղղությունները

- Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման գործիք,
- Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի արտաուսումնական գործունեության մեջ,
- Արդյունավետ մեդիագործիքները տարրական դպրոցում:

Գիտաժողովին մասնակցելու հայտը անհրաժեշտ է ներկայացնել մինչև 2020թ. հոկտեմբերի 9-ը: Գիտաժողովի աշխատանքային լեզուն հայերենն է: Գիտաժողովի նյութերը կտպագրվեն առանձին ժողովածուով: Ելույթների համար տրվելու է մինչև 10 րոպե ժամանակ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել գիտաժողովի վերոնշյալ ուղղությունները, պատրաստել հոդվածներ՝ մինչև հոկտեմբերի 30-ը գիտաժողովին մասնակցելու և ժողովածուում տպագրվելու համար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

30.09.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. ՍԿ, հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողների թեզերի նախապաշտպանությունների 1-ին փուլի կազմակերպման մասին:
2. Մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողների թեզերի և բակալավր 4-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման մասին:
3. Մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին: /զեկ.՝ Գ. Հարությունյան/

1. ԼՍԵՑԻՆ - ՍԿ, հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի թեզերի նախապաշտպանությունների 1-ին փուլի կազմակերպման մասին:

Ա. Թոփուզյան – Նախապաշտպանության 1-ին փուլի ընթացքում ուսանողները պետք է ներկայացնեն իրենց թեզի թեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները, հետազոտության ընթացքը և ընտրված մեթոդները: Խնդրում եմ հանդիպեք Ձեր ուսանողների հետ և նախապատրաստեք նրանց հաշվետվության:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ս/թ. հոկտեմբերի 22-ին և 23-ին կազմակերպել ՍԿ հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողների նախապաշտպանության 1-ին փուլը:

2. ԼՍԵՑԻՆ - Մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողների թեզերի և բակալավր 4-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյան, Լ. Ասատրյան, Ա. Հովհաննիսյան, Լ. Պողոսյան, Ս. Սիսյան, Հ. Թադևոսյան, Ն. Կարապետյան, Գ. Աղուզումցյան, Գ. Հակոբյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ներքոհիշյալ ուսանողների ավարտական աշխատանքների և թեզերի թեմաների խորագրերը և ղեկավարների ցանկը:

ՄԿ, առկա բակալավր 4-րդ կուրս			
Հ/Հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Էքսկուրսիաների դերը կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության գործում:	Մանուկյան Վարդ	Ասատրյան Լ.
2.	Կրտսեր դպրոցականների քաղաքացիական դաստիարակության իրականացման մանկավարժական պայմանները:	Դարբինյան Սիլվա	Ասատրյան Լ.
3.	Ուսումնառության առաջին շրջանում կրտսեր դպրոցականի դժվարությունների հաղթահարման միջոցները:	Մարտիրոսյան Գոհար	Հակոբյան Գ.
4.	Տարրական դպրոցում մեդիառեսուրսների կիրառմամբ դիդակտիկ խաղերի նախագծում մասնագիտական առարկայի շրջանակներում:	Սարոյան Նարե	Կարապետյան Ն.
5.	Տարրական դպրոցում ինտեգրված դասերի նախագծում միջառարկայական կապերի ապահովմամբ:	Սարգսյան Աննա	Կարապետյան Ն.
6.	Թանգարանային մանկավարժությունը որպես կրտսեր դպրոցականների հայրենասիրական դաստիարակությանա միջոց:	Մեսրոպյան Արմինե	Պողոսյան Լ.

ԿՀՍ, առկա բակալավր 4-րդ կուրս			
Հ/հ	Ավարտական աշխատանքի Թեմա	Ուսանող	Գիտական ղեկավար
1.	Սովորողների սոցիալականացման գործընթացի դինամիկան 1-4-րդ դասարաններում:	Մարգարյան Օֆելյա	Թադևոսյան Հ.
2.	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամատարության իրականացման առանձնահատկությունները ՀՀ-ում:	Գասպարյան Աննա	Թադևոսյան Հ.
3.	Ավանդական և ընտանիքանման մոդելի մանկատներում սաների սոցիալականացման առանձնահատկությունների համեմատական վերլուծություն:	Շահբազյան Լիլիթ	Թադևոսյան Հ.
4.	Հեռուստատեսային մանկապատանեկան հաղորդումների ազդեցությունը դեռահասների սոցիալականացման վրա:	Բաջախյան Սիլվարդ	Մարկոսյան Ն.
5.	Սոցիալական մանկավարժի խորհրդատվական աշխատանքը ծնողների հետ:	Թոսունյան Լիանա	Մարկոսյան Ն.
6.	Կրտսեր դպրոցականների նախապատրաստումը տարաբնույթ	Բարսեղյան Լիանա	Մարկոսյան Ն.

	արտակարգ իրավիճակներին:		
7.	Սոցիալական մանկավարժի աջակցությունը մասնագիտական կողմնորոշման գործում:	Գյոզալյան Մարինե	Նազարյան Լ.
8.	Ժամանակակից ընտանիքի դերը երեխայի զարգացման գործում:	Թաթոյան Անի	Նազարյան Լ.
9.	Դեռահասների վարքային շեղումների կանխարգելումը:	Հակոբյան Սոֆիկ	Նազարյան Լ.
10.	Տարրական դպրոցի աշակերտական կոլեկտիվի ձևավորման սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրը առցանց ուսուցման համակարգում:	Մելքոնյան Տաթևիկ	Հարությունյան Գ.
11.	Սոցիալական մանկավարժի աշխատանքը մեծահասակների կրթության ոլորտում:	Հայրապետյան Սոֆյա	Հարությունյան Գ.
12.	Սոցիալական մանկավարժի աշխատանքը ապահարմարված երեխաների հետ:	Ղռմաջյան Ջոանա	Հովհաննիսյան Ա.
13.	Մուլտֆիլմերի ազդեցությունը երեխայի դաստիարակության գործում:	Խաչատրյան Սոնա	Հովհաննիսյան Ա.
14.	Երեխաների սոցիալ- մանկավարժական աջակցությունը խնամատար ընտանիքներում:	Խաչատրյան Շողիկ	Դալլաքյան Ա.
15.	Կրտսեր դպրոցականների սոցիալ-անձնային զարգացման մանկավարժական պայմանները:	Բալոյան Տանյա	Դալլաքյան Ա.
16.	Ապագա սոցիալական մանկավարժների մասնագիտական ինքնորոշման հիմնախնդիրը դպրոց-բուհ համագործակցության շրջանակում:	Հայրապետյան Աննա	Եգանյան Գ.
17.	Արտադպրոցական կրթադաստիարակչական գործունեության դերը տարրական դպրոցի սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում:	Ավետիսյան Ալինա	Եգանյան Գ.
18.	Սոցիալ-մանկավարժական գործունեությունը Հայ օգնության ֆոնդի երեխաների աջակցության կենտրոնում:	Սահակյան Ռուզաննա	Եգանյան Գ

ՄԿ, առկա մագիստրատուրա 1-ին կուրս			
Հ/Հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Սովորողի գիտելիքների գնահատման առանձնահատկությունները տարրական դպրոցում:	Գևորգյան Տաթևիկ	Թոփուզյան Ա.
2.	Ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպումն ու վերահսկողությունը դպրոցում:	Քալանթարյան Սոնա	Հովհաննիսյան Ա.
3.	Հեռավար ուսուցման կազմակերպման մանկավարժական պայմանները կրտսեր դպրոցում:	Խաչատրյան Լիդա	Մարտիրոսյան Ն.
4.	Մանկավարժի իմպրովիզացիան որպես մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց:	Մկրտչյան Հասմիկ	Մարկոսյան Ն.
5.	Դիագնոստիկայի իրականացումը կրտսեր դպրոցականների դաստիարակության գործընթացում:	Թամրազյան Սոնա	Եգանյան Գ.
6.	Կրտսեր դպրոցականների կոգնիտիվ և մեթակոգնիտիվ ընդունակությունների ձևավորման մանկավարժական պայմանները:	Հովսեփյան Իզաբելլա	Դալլաքյան Ա.
7.	Տարրական դպրոցի շախմատի ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաները:	Անտոնյան Սեդա	Դալլաքյան Ա.
8.	Ապագա ուսուցիչների պատրաստման աքմեոլոգիական մոտեցումները:	Փիլոյան Հայկուշ	Պողոսյան Լ.
9.	Կրտսեր դպրոցականների ինքնակառավարման որակների ձևավորման հիմնախնդիրը	Սարգսյան Դեզդեմոնա	Նազարյան Լ.
10.	Հաղորդակցական կարողությունը որպես ապագա ուսուցչի մասնագիտական կարևորագույն կոմպետենցիա:	Գևորգյան Աննա	Բաբայան Ի.

ԿՀՍ, առկա մագիստրատուրա 1-ին կուրս			
Հ/Հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Կրթական չափորոշիչների ազդեցությունը սովորողի սոցիալականացման վրա:	Պետրոսյան Սոնա	Թոփուզյան Ա.
2.	ՀՀ-ում երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների ուժեղ և թույլ կողմերի	Արամյան Թամարա	Թադևոսյան Հ.

	վերլուծություն (նորմատիվ-իրավական, սոցիալ-մանկավարժական կողմեր)		
3.	ՀՀ-ում շուրջօրյա խնամքի հաստատությունների վերակազմակերպումը երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ուղղված սոցիալ-մանկավարժական գործունեության համատեքստում	Երանոսյան Լուսինե	Թադևոսյան Հ.
4.	Առցանց ուսուցման ազդեցությունը երեխաների սոցիալականացման վրա	Հակոբյան Աննա	Մարկոսյան Ն.
5.	Երեխաների սոցիալականացման հիմնախնդիրը նախադպրոցական ուսումնական հաստատություններում	Գրիգորյան Աննա	Մարկոսյան Ն.
6.	Սոցիալական մանկավարժի գործունեության առանձնահատկությունները օժտված երեխաների հետ:	Զաքոյան Հասմիկ	Նազարյան Լ.
7.	Կրտսեր դպրոցականների սոցիալական հարմարման հիմնախնդիրը համավարակի պայմաններում:	Զոհրաբյան Անի	Նազարյան Լ.

ՄԿ, հեռակա բակալավր 5-րդ կուրս			
Հ/Հ	**ԹԵՄԱ**	**ԿԱՏԱՐՈՂ**	**ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ**
1.	Սովորողների ազգային ինքնագիտակցության ձևավորման ուղիները տարրական դպրոցի ուսուցման գործընթացում:	Ստեփանյան Լիլիթ	Գևորգյան Մ.
2.	Սովորողների բազմամշակութային դաստիարակության միջոցները տարրական դպրոցի ուսուցման գործընթացում:	Մուրադյան Կարինե	Գևորգյան Մ.
3.	Էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների կիրառումը տարրական դպրոցում:	Սիմոնյան Լուսինե	Կարապետյան Ն.

ԿՀՍ, հեռակա բակալավր 5-րդ կուրս			
Հ/Հ	**ԹԵՄԱ**	**ԿԱՏԱՐՈՂ**	**ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ**
1.	Մանկավարժական բուհի ուսանողների հանդուրժողականության զարգացման սոցիալ-մանկավարժական ուղիները:	Բաղինյան Անի	Թադևոսյան Հ.
2.	Կամավորության զարգացման ուղիները այլընտրանքային խնամքի կազմակերպման համակարգում:	Ասատուրյան Լիաննա	Թադևոսյան Հ.
3.	Մասնավոր և պետական դպրոցներում	Արմիյանց Մարիամ	Թադևոսյան Հ.

	սովորողների սոցիալականացման առանձնահատկությունների համեմատական վերլուծություն:		
4.	Սոցիալական մանկավարժի աշխատանքը կրտսեր դպրոցականների ուսման մոտիվացիայի բարձրացման գործում:	Այվազյան Սաթենիկ	Եգանյան Գ.
5.	Սոցիալ-մանկավարժական աջակցության ձևերը ժամանակակից ընտանիքին:	Հարոյան Անահիտ	Աղուզումցյան Գ.
6.	Հատուկ կարիք ունեցող երեխաներին հասարակության մեջ ինտեգրելու խնդիրը:	Կարապետյան Անի	Աղուզումցյան Գ.
7.	Սոցիալական մանկավարժի աշխատանքը ռիսկի խմբի երեխաների հետ:	Գեղամյան Ասյա	Հովհաննիսյան Ա.
8.	Սոցիալական մանկավարժի աշխատանքը օժտվածություն ունեցող երեխաների հետ:	Աղաջանյան Սեդա	Հովհաննիսյան Ա.
9.	Սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները տեղահանված ընտանիքների հետ:	Մկրտչյան Նազելի	Մարկոսյան Ն.
10.	Պատերազմական /հետպատերազմական/ ժամանակաշրջանում սոցիալական մանկավարժի կողմիցիրականացվող աշխատանքը փախստականների ընտանիքների հետ:	Ղազարյան Պավել	Պողոսյան Լ.
11.	Սոցիալական մանկավարժի աշխատանքը ընտանիքում դաստիարակության հումանացման ուղղությամբ:	Կարապետյան Գայանե	Պողոսյան Լ.
12.	Սոցիալական մանկավարժի աշխատանքը առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հետ:	Պատուրյան Քրիստինա	Սիսյան Ս.
13.	Սոցիալ-մանկավարժական խորհրդատվության կիրառման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում:	Սարգսյան Գայանե	Սիսյան Ս.

ՄԿ, հեռակա մագիստրատուրա 1-ին կուրս			
Հ/Հ	**ԹԵՄԱ**	**ԿԱՏԱՐՈՂ**	**ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ**
1.	Ստեղծագործական, դերային և իմացական խաղերը տարրական դպրոցում՝ մանկավարժական գործընթացում:	Նազարյան Սոֆյա	Հովհաննիսյան Ա.
2.	Տարրական դասարանների ուսուցչի դերը կրտսեր դպրոցականների օրվա ռեժիմի պահպանման գործում:	Խանդամիրյան Ալլա	Մարտիրոսյան Ն.
3.	Մանկավարժական աջակցման	Հարությունյան Մանե	Բաբայան Ի.

	տեխնոլոգիայի կիրառումը տարրական դպրոցում:		
4.	Ապագա ուսուցչի մանկավարժական ռեֆլեքսիայի ձևավորումը՝ որպես դասավանդողի մասնագիտական կարևոր հատկանի	Ադամյան Նարինե	Սիսյան Ս.
5.	Ուսուցման սկզբունքների կիրառման առանձնահատկությունները տարրական դպրոցում:	Աթանյան Լիլիթ	Աղուզումցյան Գ.
6.	Կրտսեր դպրոցականների առաջնորդական որակների ձևավորումը ուսուցման գործընթացում:	Գևորգյան Անի	Նազարյան Լ.
7.	Շախմատի ուսուցման դժվարությունները և նրա արդյունավետության ապահովման հեռանկարները տարրական դպրոցում:	Գևորգյան Վարդուհի	Ասատրյան Լ.
8.	Դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերն ու միջոցները տարրական դպրոցի սովորողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներում:	Պետրոսյան Գոհար	Ասատրյան Լ.
9.	Մեդիատեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցականների առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման գործում:	Առաքելյան Տաթևիկ	Կարապետյան Ն.
10.	Դպրոցի, ուսումնական հաստատության դերը անչափահասի հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում:	Թումանյան Ելենա	Մանուկյան Ա.
11.	Ուսումնական միջավայրին կրտսեր դպրոցականների հարմարման մանկավարժական պայմանները	Պողոսյան Սոնա	Հակոբյան Գ.

3. ԼՍԵՑԻՆ - Մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին:

Գ. Հարությունյան – Այս պահին ընթացքի մեջ է երկու պրակտիկա՝ սոցիալական մանկավարժություն հեռակա բակալավր 4-րդ կուրս և սոցիալական մանկավարժություն առկա բակալավր 3-րդ կուրս: Երկու կուրսերում էլ պրակտիկան իրականացվում է առցանց «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրուն» - ում: Հեռակա բակալավր 4-րդ կուրսում պրակտիկայում ներգրավված են տիկին Հովհաննիսյանը և

տիկին Բաբայանը, իսկ առկա բակալավր 3-րդ կուրսում՝ տիկին Դալլաքյանը և տիկին Բաբայանը: Բոլոր մասնագետները և ուսանողները ակտիվ մասնակցում են պրակտիկային, այս պահին որևէ խնդիր չունենք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Գ. Հարությունյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

14.10.2020թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողների թեզերի նախապաշտպանությունների մասին:
2. Ասպիրանտների և հայցորդների ատեստացիայի մասին:
3. Գիտաժողովի կազմակերպման ընթացքի մասին: /զեկ.՝ Լ. Պողոսյան/
4. Միջանկյալ ստուգումների կազմակերպման մասին:
5. Շարունակական կրթության քննությունների ընթացքի մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողների թեզերի նախապաշտպանությունների մասին:

Ա. Թոփուզյան – Մենք լսեցինք հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողների թեզերի նախապաշտպանությունների ուսանողների զեկույցները, որի ընթացքում որոշ դիտողություններ և առաջարկություններ կատարեցինք, հանձնարարություններ տվեցինք: Հաջորդը կլինի սեմինար՝ տեսաներկայացումներով: Խնդրում եմ ուշադրություն դարձրեք տեսաներկայացման ձևավորմանը, բանավոր խոսքի որակին և տևողությանը: Հետևեք, որպեսզի ուսանողները կատարեն արված բոլոր դիտողությունները և տրված բոլոր հանձնարարությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ս/թ նոյեմբերի 26 - ին և 27-ին անցկացնել սեմինար՝ տեսաներկայացումներով, որը կլինի նախապաշտպանության համար փորձնական փուլ:

2. **ԼՍԵՑԻՆ** - Ասպիրանտների և հայցորդների ատեստացիայի մասին:

Ա. Թոփուզյան – Յուրաքանչյուր տարվա նման այն տարի ևս դեկտեմբեր ամսին պետք է անցկացնենք հայցորդների և ասպիրանտների ատեստացիա 2019-2020 ուս. տարվա ընթացքում իրենց կատարած աշխատանքների հիման վրա: Խնդրում եմ հանդիպել Ձեր ասպիրանտների և հայցորդների հետ և պատրաստել հաշվետվությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ասպիրանտների և հայցորդների ատեստացիան անցկացնել ս/թ դեկտեմբերի 9-ին:

3. **ԼՍԵՑԻՆ** - Գիտաժողովի կազմակերպման ընթացքի մասին:

Լ. Պողոսյան – Այս պահի դրությամբ ստացել ենք գիտաժողովի մասնակցության 22 հայտ: Հայտեր ենք ստացել ինչպես պրոֆեսորադասախոսական կազմից, այնպես էլ ասպիրանտներից և մագիստրոսներից: 10 մասնակից արդեն ուղարկել է նաև հոդվածները:

Ա. Թոփուզյան – Մեզ անհրաժեշտ է ձևավորել գիտաժողովի օրակարգը, այն նպատակահարմար է սկսել պլենար նիստով, որին կհաջորդի 3 մասնախմբերի զուգահեռ աշխատանքը: Առաջարկում եմ տալ թեկնածուներ մասնախմբերի աշխատանքը ղեկավարելու համար: Միաժամանակ առաջարկում եմ կոնֆերանսի նյութերի ժողովածուն նվիրել 2020թ. արցախյան պատերազմում զոհված ՀՊՄՀ-ի զինվորների և դասախոսների հիշատակին:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Մինչև նոյեմբերի 25-ը բոլոր մասնակիցներին խնդրել ներկայացնել հոդվածները:

2. Հանձնարարել Լ. Պողոսյանին ձևավորելու գիտաժողովի օրակարգը:

3. Լ. Պողոսյանին, Ա. Մանուկյանին և Ս. Ասատրյանին հանձնարարել ղեկավարել մասնախմբերի աշխատանքը:

4. Միաձայն ընդունել Ա. Թոփուզյանի առաջարկությունը կոնֆերանսի նյութերի ժողովածուն արցախյան հերոսամարտում զոհված ՀՊՄՀ-ի ուսանողների և դասախոսների հիշատակին նվիրելու մասին:

4. **ԼՍԵՑԻՆ** - Միջանկյալ ստուգումների կազմակերպման մասին:

Ա. Թոփուզյան – Ինչպես գիտեք իրավիճակով պայմանավորված որոշվել է, որ այս տարի երկու միջանկյալ ստուգման փոխարեն պետք է անցկացնել մեկ միջանկյալ ստուգում: Յուրաքանչյուր դասախոս ինքն է որոշում առարկայական նկարագրում ներկայացված

երկու միջանկյալ ստուգումներից որն է իրականացնելու: Հնարավոր է նաև այդ երկու ձևերը միացնել և մեկ միջանկյալով ամփոփել: Օրինակ՝ եթե տվյալ առարկայի միջանկյալ ստուգումները գրավոր աշխատանք և թղթապանակ է, կարող եք գրավորի վերջին 3-րդ հարցը, որը գործնական բնույթ ունի, ներառել թղթապանակում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հստակեցնել միջանկյալ ստուգման ձևը և այդ մասին նախապես տեղեկացնել ամբիոնին:

5. **ԼՍԵՑԻՆ** - Շարունակական կրթության քննությունների ընթացքի մասին:

Գ. Եգանյան – 20.11.2020թ. ժամը 14:20 ունեմ Սոցիալական մանկավարժություն մասնագիտության շարունակական կրթության քննություն: Հարցաշարը և դասախոսությունների փաթեթը նախապես տրամադրել եմ ուսանողին:

Մ. Ասատրյան – 12.11.2020թ. ժամը 10:30 ունեմ շարունակական կրթության քննություն ՄՖԻ ֆակուլտետում: Քննությանը մասնակցելու է 11 ուսանող, հանձնելու են ռեֆերատ, որի թեմաները, գնահատման չափանիշները նախապես ուղարկվել է ուսանողներին:

Գ. Հակոբյան – 13.11.2020թ. ժամը 11:00 ունեմ շարունակական կրթության քննություն ԲՍ ֆակուլտետում: Քննությանը մասնակցելու է 2 ուսանող, նախապես հանդիպել եմ ուսանողների հետ, տվել առաջադրանքներ:

Մ. Գևորգյան – 12.11.2020թ. ժամը 12:30 ունեմ շարունակական կրթության քննություն ՍԿ ֆակուլտետում: Քննությանը մասնակցելու է 9 ուսանող: Նախապես ստացել են հանձնարարությունը, վաղը google meet հավելվածով կիրականացնենք բանավոր հարցում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Շարունակական կրթության քննությունները անցկացնել ըստ գրաֆիկի և արդյունքները հաջորդ օրը ներկայացնել ամբիոն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

11.11.2020թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Հայցորդների և ասպիրանտների ատեստավորման մասին:
2. Հայցորդներ Լորեթա Ավետիսյանի, Թինա Մարգարյանի, Աիդա Բաղալյանի և Ալեսա Դուրգարյանի թեկնածուական ատենախոսության թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին:
3. Աշոտ Լեկդարի Մանուկյանի «Ընտանեկան դաստիարակությունը հայ էթնոմանկավարժական մշակույթում» թեմայով ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին: /զեկ. Ա. Հովհաննիսյան/
4. Մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին: /զեկ. Գ. Հարությունյան/
5. «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» ուսումնամեթոդական ձեռնարկի մասին: /զեկ. Ա. Թոփուզյան/

1. **ԼՍԵՑԻՆ –** Հայցորդների և ասպիրանտների ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Թոփուզյան, Լ. Ասատրյան, Լ. Պողոսյան, Ա. Մանուկյան, Գ. Հակոբյան, Ի. Բաբայան

ՈՐՈՇԵՑԻՆ – Ատեստավորել ներքոհիշյալ հայցորդներին և ասպիրանտներին՝ ատենախոսության թեմայի շրջանակներում 2020թ. կատարած աշխատանքների հիման վրա: /Հաշվետվությունները կցվում են/

1. Գևորգյան Մարիա /ասպիրանտ/
2. Մկրտչյան Վարդիթեր /ասպիրանտ/
3. Գինոսյան Սյուզաննա /ասպիրանտ/
4. Յարազյան Էմմա /ասպիրանտ/
5. Կոստանյան Էմմա /ասպիրանտ/

6. Թադևոսյան Միշա /ասպիրանտ/
7. Անտոնյան Լիլիթ /հայցորդ/
8. Սարգսյան Անուշ /հայցորդ/
9. Պետրոսյան Արևիկ /հայցորդ/
10. Հովսեփյան Աստղիկ /հայցորդ/
11. Ավետիսյան Լորեթա /հայցորդ/
12. Բաղալյան Աիդա /հայցորդ/
13. Դուրգարյան Ալեսա/հայցորդ/
14. Մարգարյան Թինա /հայցորդ/

2. **ԼՍԵՑԻՆ** - Հայցորդ Լորեթա Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Ա. Մանուկյանը, Հ. Թադևոսյանը

ՈՐՈՇԵՑԻՆ -1. Հաստատել Լորեթա Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ «Գեղագիտական դաստիարակության դերը հայեցի դաստիարակության և հայապահպանման գործում (Իրանի հայկական համայնքի օրինակով)»:

2. Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աիդա Թոփուզյանին:

ԼՍԵՑԻՆ - Հայցորդ Թինա Մարգարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Ա. Մանուկյանը, Լ. Պողոսյանը, Գ. Եգանյանը

ՈՐՈՇԵՑԻՆ -1. Հաստատել Թինա Մարգարյանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ «Մանկավարժական դիագնոստիկան որպես հանրակրթական դպրոցի ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց»:

2. Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսինե Պողոսյանին:

ԼՍԵՑԻՆ - Հայցորդ Աիդա Բաղալյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Ա. Մանուկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ -1. Հաստատել Աիդա Բաղալյանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ «Կրտսեր դպրոցականների քաղաքացիական դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրները»:

2. Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լաուրա Ասատրյանին:

ԼՍԵՑԻՆ - Հայցորդ Ալեսա Դուրգարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Լ. Պողոսյանը, Ի. Բաբայանը

ՈՐՈՇԵՑԻՆ -1. Հաստատել Ալեսա Դուրգարյանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ «Առցանց հարթակը որպես ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կարևոր միջոց»:

2. Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Իզաբելլա Բաբայանին:

3. **ԼՍԵՑԻՆ** – Աշոտ Լեկդարի Մանուկյանի «Ընտանեկան դաստիարակությունը հայ էթնոմանկավարժական մշակույթում» թեմայով ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին: /զեկ. Ա. Հովհաննիսյան/

Ա. Հովհաննիսյան – Ա. Մանուկյանի ներկայացրած «Ընտանեկան դաստիարակությունը հայ էթնոմանկավարժական մշակույթում» թեմայով ուսումնական ձեռնարկի յուրաքանչյուր բաժին ներառում է հարցեր և առաջադրանքներ, օգտագործված գրականության ցանկ, ուսումնահետազոտական աշխատանքների, ներկայացումների,

շարադրանքների, ռեֆերատների համար թեմատիկա, որն ավելի է բարձրացնում ձեռնարկի ուսուցողական նշանակությունը: Մեթոդական ուղեցույցն իր թեմատիկ ընդգրկմամբ, վերլուծությունների բնույթով գիտագործնական կարևոր նշանակություն ունի մանկավարժական բարձրագույն կրթության բովանդակության մեջ: Բաժիններում թեմաները տրամաբանորեն և բովանդակային առումով համակարգված են, դիտարկված են եզրույթներն ու հասկացությունները, լիարժեքորեն մեկնաբանված, հիմնավորված են և բխում են գիտահետազոտական ուսումնասիրության մեթոդաբանության հիմնարարար գաղափարներից:

Աշխատանքը շարադրված է գիտական լեզվով, բովանդակային և կառուցվածքային կողմերի ճիշտ համադրությամբ: Աշոտ Մանուկյանի ‹‹ Ընտանեկան դաստիարակությունը հայ էթնոմանկավարժական մշակույթում » խորագրով ուսումնական ձեռնարկը կիրառական նշանակություն ունեցող կարևոր ներդրում է մանկավարժական բարձրագույն կրթության բովանդակության մեջ.:

Առաջարկում եմ Աշոտ Մանուկյանի «Ընտանեկան դաստիարակությունը հայ էթնոմանկավարժական մշակույթում» խորագրով ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Գ. Հակոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Աշոտ Լեկդարի Մանուկյանի «Ընտանեկան դաստիարակությունը հայ էթնոմանկավարժական մշակույթում» թեմայով ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

4. **ԼՍԵՑԻՆ** - Մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին: /զեկ. Գ. Հարությունյան/

Գ. Հարությունյան – Այս պահին ընթացքի մեջ է ‹‹Սոցիալական մանկավարժություն›› առկա բակալավր 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան, որն իրականացվում է առցանց ‹‹Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն››-ում: Ունեցել ենք մանկավարժահետազոտական պրակտիկա ՍԿ և ԿՀՍ ֆակուլտետների առկա և հեռակա մագիստրատուրա 2-րդ կուրսում: Պրակտիկան իրականացվել է առցանց նույն ֆակուլտետների բակալավրի հենքի վրա: Մագիստրոսները իրականացրել են

փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն, թեզի շրջանակներում փոքրիկ հետազոտություն, դասալսումներ, որից հետո դասեր են վարել: Այս պրակտիկան արդեն ավարտվել է, ուսանողները ներբեռնել են իրենց թղթապանակները համապատասխան հարթակներում: Երկու օրվա ընթացքում թղթապանակները կգնահատվեն և գնահատականները կանցկացվեն համակարգ:

Պրակտիկայի ընթացքում խնդիրներ գրեթե չեն առաջացել, թե՛ մեթոդիստները, թե՛ մանկավարժները, թե՛ ուսանողները պարտաճանաչ կատարել են իրենց գործառույթները պրակտիկայի հետ կապված: Միակ դժվարությունը առցանց պրակտիկան հնարավորինս արդյունավետ անցկացնելն էր, որը հիմնականում ստացվեց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփության, Լ. Պողոսյան, Գ. Աղուզումցյան, Գ. Եգանյան, Ի. Բաբայան

ՈՐՈՇԵՑԻՆ – Բոլոր տիպի պրակտիկաները մագիստրատուրայում նպատակաուղղել թեզի թեմայի իրականացմանը, այդ նպատակով ապահովել պրակտիկայի և թեզի ղեկավարների համագործակցությունը հետազոտական աշխատանքի իրականացման գործում:

5. **ԼՍԵՑԻՆ -** «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» ուսումնամեթոդական ձեռնարկի մասին:

Ա. Թոփուզյան - «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացված է մեդիատեխնոլոգիաների մանկավարժականացման ուղղությամբ ուսուցիչների և ուսանողների շրջանում անցկացված հարցախույզի արդյունքների վերլուծությունը, ՀՊՄՀ Մանկության հիմնախնդիրներն ուսումնասիրող լաբորատորիայի կողմից մշակված «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» այլընտրանքային դասընթացի փաթեթը, սահմանվում են տարրական դպրոցում մեդիատեխնոլոգիաների կիրառման նպատակները, առանձնահատկությունները, ձևերն ու մեխանիզմները, ինչպես նաև մեդիատեխնոլոգիաների կիրառման գործընթացում ուսուցիչ-ծնող համագործակցությունն ապահովող քայլերը և ծնողական կրթության թեմատիկան՝ մեկ

ուսումնական տարվա համար: Ձեռնարկի երկրորդ մասում տեղ են գտել նաև «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» թեմայով գիտաժողովի նյութերը:

Ուսումնամեթոդական ձեռնարկը հասցեագրված է կրթության կազմակերպիչներին, տարրական դպրոցի ուսուցիչներին, ծնողներին, մանկավարժական բուհերի ուսանողներին, դասախոսներին և նշված հիմնախնդրով հետաքրքրվող մասնագետներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ասատրյանը, Ա. Մանուկյանը, Ս. Սիսյանը, Գ. Հակոբյանը, Հ. Թադևոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Երաշխավորել «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության և դիմել ՀՊՄՀ գիտ.խորհրդին այդ խնդրանքով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձեռնարկը մեծ օգնություն է տարրական դպրոցին, խիստ արդիական բովանդակություն ունի, նպաստում է ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի բարձրացմանն ու ուսուցման անհատականացմանը, ծնող-դպրոց կապի ամրապնդմանը և նվիրված է Արցախյան պատերազմում /2020թ./ զոհված ՀՊՄՀ ուսանողների և դասախոսների հիշատակին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

09.12.2020թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. 2020-2021 ուսումնական տարվա ՍԿ ֆակուլտետի հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին:
2. Էլեկտրոնային մատյանների մասին:
3. 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատում դասավանդվող առարկաների փաթեթների մասին:
4. 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակի ամբիոնի աշխատանքի միջոցառումների պլանի հաստատման մասին:

1. ԼՍԵՑԻՆ - 2020-2021 ուսումնական տարվա ՍԿ ֆակուլտետի հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին:

Ա. Թոփուզյան – Ս/թ փետրվարի 2-5-ը տեղի ունեցավ ՍԿ ֆակուլտետի հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի պաշտպանությունը:

Հանձնաժողովի նախագահ, մ.գ.դ., պրոֆեսոր Պ. Գևորգյանի ներկայացրած հաշվետվության մեջ նշվում է, որ բոլոր մագիստրոսական թեզերը համապատասխանում էին և բավարարում մագիստրոսական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, առանձնանում էին բովանդակության հստակությամբ, տրամաբանությամբ, գծագրերի, ցուցադրական և այլ նյութերի բավարար քանակով: Ներկայացված բոլոր թեմաները արդիական էին:

Ելույթների տևողության հստակ պահպանումը, ներկայացումներին զուգահեռ սահիկաշարերի ցուցադրումը վկայում էր մագիստրոսների և իրենց ղեկավարների նախապատրաստական աշխատանքների լավ կազմակերպման մասին:

Պաշտպանության գործընթացը դեկանատի կողմից կազմակերպվել էր պատշաճ մակարդակով: Առկա էր բարենպաստ աշխատանքային միջավայր, որը հնարավորություն տվեց մագիստրոսներին լիովին դրսևորել իրենց կարողությունները, իսկ հանձնաժողովին՝ ճիշտ գնահատել ինչպես մագիստրոսների, այնպես էլ գիտական ղեկավարների կատարած աշխատանքները: Հանձնաժողովի նախագահ պարոն Պ. Գևորգյանը առանձնացրել էր նաև հետևյալ առաջարկությունները.

1. Անհրաժեշտ է ավելի հստակ ձևակերպել մագիստրոսական թեզի նպատակը և նորույթը, ինչպես նաև եզրակացությունների բովանդակությունը:
2. Որոշ թեզերի վերնագրերը հստակեցման և հետազոտության բովանդակության հետ համապատասխանեցնելու կարիք ունեն:
3. Անհրաժեշտ է թեզի փորձարարական բաժնում ավելի շատ տեղ հատկացնել հիմնական դրույթների ներկայացմանը՝ դրանով ավելի հստակ հիմնավորելով հետազոտության նպատակը, խնդիրները, նորույթը:
4. Սոցիոլոգիական հարցումներ անցկացնելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել առաջադրված հարցերի բովանդակային կողմին՝ մշակելով այնպիսի հարցեր, որոնք կնպաստեն հիմնախնդրի ավելի խորը պարզաբանմանը:
5. Մեր կարծիքով գնահատման ձևն ունի կատարելագործման կարիք: Որպեսզի գնահատումը լինի օբյեկտիվ՝ անհրաժեշտ է ամենաբարձր և ամենացածր գնահատականները հանել և գնահատման միջինը հանել մնացած թվանշաններով:

Ա. Թոփուզյան – Այս առաջարկություններին ես ուզում եմ ավելացնել որոշ դիտարկումներ. փորձը ցույց է տալիս, որ.

1. Թեմաները պետք է լինեն փոքր, կոնկրետ հիմնախնդիր պարունակող:
2. Ղեկավարների և ընդդիմախոսների կարծիքները պետք է լինեն ավելի կոնկրետ և օբյեկտիվ: Անհրաժեշտ է հստակ նշել աշխատանքի թերությունները և բացթողումները:

Ցանկանում եմ նաև նշել, որ մեր ամբիոնի աշխատանքներից լավագույնը Աննա Զաքարյանի «Մայրենիի 3-րդ դասարանի դասագրքի դաստիարակչական նշանակությունը» թեմայով մագիստրոսական թեզն էր, ղեկավար՝ Նարինե Մարկոսյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ մ.գ.դ., պրոֆեսոր Պ. Գևորգյանի առաջարկությունները և մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանի դիտարկումները հաջորդ տարիների թեզերը պատրաստելիս:

2.ԼՍԵՑԻՆ - Էլեկտրոնային մատյանների մասին:

Է. Յարազյան – Google classroom հարթակի յուրաքանչյուր դասընթացի էջում ստեղծվել են էլեկտրոնային մատյաններ ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման համակարգի համար: Էլեկտրոնային մատյանների կիրառումը պարտադիր է այն դասընթացների համար, որոնք ամբողջությամբ կամ մասնակի իրականացվելու են առցանց եղանակով: Այս մատյանները նախատեսված են ուսանողների ներկայայությունը և բացակայությունը նշելու համար, այստեղ գնահատականներ չեն դրվելու::

ՈՐՈՇԵՑԻՆ – Ի գիտություն ընդունել Է. Յարազյանի հաղորդումը և մատյանները լրացնելու հետ կապված հարցերի կամ դժվարությունների դեպքում դիմել Է. Յարազյանին

3. ԼՍԵՑԻՆ - 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատում դասավանդվող առարկաների փաթեթների մասին:

Ա. Թոփուզյան – Ձեր ներկայացրած փաթեթները նախապես ուսումնասիրելուց հետո պարզ դարձավ, որ որոշ դասախոսներ փաթեթները կազմելիս հաշվի չեն առել առարկայական վերջնարդյունքները: Այն տպավորությունն է, որ գործնական աշխատանքները ձևակերպելիս ավելի շատ ուշադրություն եք դարձրել ՄԿԾ-ի հետ դրանց համապատասխանությանը, քան առարկայական չափորոշիչներին: Մինչդեռ մինչև մասնագիտությանը համապատասխանեցնելը անհրաժեշտ է գործնական աշխատանքների և առաջադրանքների բովանդակությունը համապատասխանեցնել առարկայի վերջնարդյունքներին: Խնդրում եմ վերանայեք Ձեր ներկայացրած փաթեթները այս տեսանկյունից:

ՈՐՈՇԵՑԻՆ – Վերանայել 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատում դասավանդվող առարկաների փաթեթները և փոփոխված տարբերակները համապատասխան նշումներով ուղարկել ամբիոն մինչև 15.02.2021թ.:

4. ԼՍԵՑԻՆ - 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակի ամբիոնի աշխատանքի միջոցառումների պլանի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Պատրաստ է 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը: Խնդրում եմ ծանոթացեք և եթե չկան լրացումներ, առաջարկում եմ հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

08.02.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ատեստացիայի կազմակերպման մասին:
2. 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ատեստացիայի կազմակերպման մասին:

Ա. Թոփուզյան – Մարտ ամսին նախատեսում ենք իրականացնել առկա բակալավր 4-րդ, հեռակա բակալավր 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների և մագիստրատուրա 2-րդ կուրսի թեզերի ատեստացիան: Այս փուլում ուսանողները պետք է հիմնավորեն աշխատանքի արդիականությունը և ներկայացնեն թեմայի նպատակը, դրանից բխող խնդիրները և հետազոտական աշխատանքի ընթացքը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 16.03.2021թ., 17.03.2021թ. և 18.03.2021թ. իրականացնել ՍԿ և ԿՀՍ առկա բակալավր 4-րդ և հեռակա բակալավր 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների ատեստացիան: 17.03.2021թ. իրականացնել ՍԿ և ԿՀՍ ֆակուլտետների առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների թեզերի ատեստացիան:

2. ԼՍԵՑԻՆ - 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Ես ուսումնասիրել եմ Ձեր ներկայացրած փաթեթների փոփոխված տարբերակները: Դրանք որոշ չափով բարելավված են, սակայն չեմ կարող ասել, որ

ամբողջական են: Հիմնական խնդիրը կապված է գործնական աշխատանքների, առարկայական վերջնարդյունքների և ՄԿԾ-ի վերջնարդյունքների համապատասխանության հետ: Ոչ բոլորն են կարողացել յուրաքանչյուր դասընթացի տեսական և գործնական աշխատանքների բովանդակությունը համապատասխանեցնել տվյալ դասընթացի վերջնարդյունքներին: Ցավոք, ոչ բոլորն են ըմբռնել, որ դրանք էլ իրենց հերթին պետք է համպատասխանեն մասնագիտության վերջնարդյունքներին: Այնուամենայնիվ, ես առաջարկում եմ հաստատել ներկայացված փաթեթները՝ հետագայում դրանք բարելավելու պայմանով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ասատրյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Դալլաքյան, Գ. Հակոբյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատում դասավանդվող առարկաների հետևյալ փաթեթները. Մանկավարժություն, Սոցիալական մանկավարժություն, Մանկավարժության պատմություն, Գործնական մանկավարժություն, Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ, Մանկավարժական հաղորդակցում, Մանկավարժական պրակտիկում, Տարրական կրթության մանկավարժություն, Ես և շրջակա աշխարհը, Սոցիալ-մանկավարժական դիագնոստիկա, Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ, Էթնոմանկավարժություն, Հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմություն, Սոցիալական մանկավարժության պատմություն, Արտադասարանական դաստիարակչական տեխնոլոգիաներ, Մանկության սոցիալական պաշտպանության համակարգի կառավարում, Մեդիակրթություն, Սոցիալ-մանկավարժական պրակտիկում:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

24.02.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում մագիստրատուրայում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:

1. ԼՍԵՑԻՆ - 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում մագիստրատուրայում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Ես նախապես ուսումնասիրել և վերլուծել եմ Ձեր փաթեթները: Նախ ուզում եմ ներկայացնել մի քանի ընդհանուր դիտողություններ: Ոչ մեկիս փաթեթում դասընթացի նպատակը լիարժեք և ճիշտ սահմանված չէ: Նպատակը պետք է այնպես ձևակերպել, որ միանգամից երևա, թե տվյալ դասընթացը ինչ է ավելացնում տվյալ մասնագետի գիտելիքներին, կարողություններին, հմտություններին, անձնային որակներին և արժեքներին: Այն ձևակերպեք կարճ, համառոտ և բովանդակալից, պետք չէ երկարաշունչ և մի քանի կետից բաղկացած նպատակ սահմանել: Ուստի առաջարկում եմ վերանայել Ձեր դասընթացների նպատակները: Ոչ մի դասընթաց ամբողջական չէ: Դասընթացների վերջնարդյունքները խղճուկ վերջնարդյունքներ են, որոնք չեն կարող լիարժեք ցույց տալ տվյալ առարկայի կարևորությունը այդ մասնագիտության պատրաստման գործում: Անհրաժեշտ է նաև վերանայել առարկայի վերջնարդյունքների և տվյալ մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների համապատասխանությունը:

Այժմ կանդրադառնամ որոշ առարկաների փաթեթներին առանձին-առանձին:

Լ. Նազարյանի «Ժամանակակից մանկավարժական հիմնախնդիրներ» դասընթացի փաթեթում ներկայացված 3 գործնական աշխատանքներն են՝ սեմինար, դեբատ, նախագծում: Երբ համեմատում ենք գործնական աշխատանքները առարկայի վերջնարդյունքների հետ, ոչ բոլոր վերջնարդյունքներն են դրանք փակում: Կան շատ լավ վերջնարդյունքներ, որոնք գործնական աշխատանքների և առաջադրանքների միջոցով չեն ամրապնդվում:

Ուսումնասիրել եմ Գ. Հարությունյանի «Մանկավարժական կանխատեսում և նախագծում» առարկայի փաթեթը: Դասընթացի նպատակը ճիշտ ձևակերպված չէ, անհրաժեշտ է վերանայել: Գործնական աշխատանքներն են՝ նախագիծ, բանավեճ, մոդելավորում, պլանավորման և կանխատեսման հետ կապված ոչինչ չկա, ավելի շատ հարցեր են, քան գործնական բնույթի քայլեր: Կարծում եմ այս առարկայի առաջադրանքային մասը պետք է շատ գործնական լինի, հարցադրումները պետք է կրճատել:

Ի. Բաբայանի «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկայի փաթեթի բովանդակությունը պետք է ընդլայնել գործնական տեսանկյունից: Տեսական հատվածը շատ է և դա գործնականում կիրառելու հնարավորություն ուսանողին տրված չէ: Առարկան դասավանդվում է մագիստրատուրա 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում, երբ ուսանողներն արդեն ունեն թեզի թեմաներ և Դուք պետք է առարկան սովորեցնեք իրենց թեզի թեմայի օրինակով: Սովորեցրեք ուսանողներին հարցաթերթիկ կազմել, զրույցի պլան կազմել, համեմատություն, վերլուծություն, եզրակացություն անել:

Լ. Պողոսյանի «Մանկավարժական վալեոլոգիա» առարկայի փաթեթը բավականին բովանդակալից և ամբողջական է: Բայց կան մի քանի նկատառումներ: Խնդիրների մեջ ներառված են դպրոցին ներկայացվող պահանջները, բայց դասին ներկայացվող պահանջները չկան: Շատ կարևոր է, որ այս առարկայի շրջանակներում ուսանողներին հանձնարարվի «Առողջությունը և առողջ ապրելակերպը որպես արժեք» թեմայով բանավեճ կամ էսսե: Իմ կարծիքով նպատակի մեջ պետք է ավելացնել «ձևավորել առողջ ապրելակերպի մտածելակերպ և կենսակերպ» միտքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյան, Ս. Սիսյան, Լ. Պողոսյան, Ի. Բաբայան

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մագիստրատուրայում դասավանդվող առարկաների փաթեթները՝ նշված թերությունները շտկելուց հետո:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

03.03.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրի /2021-2025թթ./ մանկավարժության ամբիոնի գործողությունների կատարման պլանի հաստատման մասին:
2. Ասպիրանտուրայում դասավանդվող ‹‹Կրթական նոր տեխնոլոգիաներ›› առարկայի որակավորման քննության հարցաշարի հաստատման մասին:

1. ԼՍԵՑԻՆ - ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրի /2021-2025թթ./ մանկավարժության ամբիոնի գործողությունների կատարման պլանի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Լ. Նազարյանին հանձնարարվել էր պատրաստել ռազմավարական ծրագրի 2021-2025թթ. ամբիոնի գործողությունների կատարման պլանը: Լ. Նազարյանը պատրաստել է այն հետևյալ ուղղություններով.

- Կրթական գործունեություն
- Գիտահետազոտական գործունեություն
- Դիմորդներ, ուսումնառողներ և շրջանավարտներ
- Անձնակազմի մարդկային ռեսուրսների զարգացում
- Միջազգային համագործակցություն
- Կրթության որակի պահովում
- Կրթության էլեկտրոնային տեխնոլոգիաներ

Խնդրում եմ ուսումնասիրել ներկայացված փաստաթուղթը՝ հաստատելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Նազարյան, Լ. Ասատրյան, Ա. Մանուկյան, Լ. Պողոսյան, Հ. Թադևոսյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրի /2021-2025թթ./ մանկավարժության ամբիոնի գործողությունների կատարման պլանը ներկայացված տարբերակով:

2.ԼՍԵՑԻՆ - Ասպիրանտուրայում դասավանդվող ‹‹Կրթական նոր տեխնոլոգիաներ›› առարկայի որակավորման քննության հարցաշարի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Վերանայվել է ‹‹Կրթական նոր տեխնոլոգիաներ›› առարկայի որակավորման քննության հարցաշարը: Այն բաղկացած է 30 հարցից և համապատասխան գրականության ցանկից: Հարցաշարն ընդգրկում է առարկայի ամբողջ բովանդակությունը: Առաջարկում եմ հաստատել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Պողոսյան, Լ. Նազարյան, Լ. Ասատրյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ‹‹Կրթական նոր տեխնոլոգիաներ›› առարկայի որակավորման քննության հարցաշարը և ներկայացնել ասպիրանտուրայի բաժին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

17.03.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների ատեստացիայի մասին /զեկուցողներ՝ Հ. Թադևոսյան, Լ. Պողոսյան/:
2. Դասընթացների անցկացման ձևերի հստակեցման մասին /առցանց, առերես/:
3. Պրակտիկայի ընթացքի մասին /զեկուցող՝ Գ. Հարությունյան/:

1. ԼՍԵՑԻՆ - Ավարտական աշխատանքների ատեստացիայի մասին /զեկուցողներ՝ Հ. Թադևոսյան, Լ. Պողոսյան/

Լ. Պողոսյան – Ատեստացիային մասնակցել են ՍԿ ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության առկա բակալավր 4-րդ և հեռակա բակալավր 5-րդ կուրսի ուսանողները: Ընդհանուր առմամբ ուսանողները կատարել էին հետազոտությունները և վերլուծությունների փուլում էին գտնվում: Բոլոր ուսանողները ատեստավորվեցին, բացառությամբ 2 ուսանողի՝ Մեսրոպյան Արմինեին և Մուրադյան Կարինեին տրվեց հնարավորություն ներկայացնել իրենց ավարտական աշխատանքի վերաբերյալ հաշվետվությունը ևս մեկ անգամ վերանայելուց և թերությունները շտկելուց հետո մարտի 26-ին: Վերոնշյալ երկու ուսանողները ևս ատեստավորվեցին: Բոլոր ուսանողներին տրվեցին համապատասխան ուղղորդումներ և հանձնարարեցինք պատրաստվել նախապաշտպանության:

Հ. Թադևոսյան – Ատեստացիային մասնակցել են ԿՀՍ ֆակուլտետի սոցիալական մանկավարժություն մասնագիտության առկա բակալավր 4-րդ և հեռակա բակալավր 5-րդ կուրսի ուսանողները: Ընդհանուր առմամբ այս փուլի համար ուսանողները բավականին աշխատանք էին կատարել, առանձին դիտարկումներ ունենք որոշ աշխատանքների վերաբերյալ, որոնք վերաբերում են հիմնականում նպատակի, խնդիրների ձևակերպմանը և հետազոտական աշխատանքին: Դրանք ներկայացրել ենք ատեստացիայի ժամանակ և քննարկել ուսանողների ու ղեկավարների հետ: Ունեինք 3 խնդրահարույց աշխատանք, որոնք ուսանողները չներկայացրեցին՝ պատճառաբանելով,

որ այս փուլի համար պահանջվող մասը պատրաստ չէ, բայց խոստացան, որ շատ արագ կլրացնեն բացթողումը և կներկայացնեն:

Ա. Թոփուզյան – Շնորհակալություն եմ հայտնում Լ. Պողոսյանին և Հ. Թադևոսյանին՝ ավարտական աշխատանքների ատեստացիան իրականացնելու համար: Ղեկավարներին խնդրում եմ աշխատել ուսանողների հետ ատեստացիայի ընթացքում նշված թերությունները շտկելու և բացթողումները լրացնելու ուղղությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ասատրյան, Գ. Հակոբյան, Ն. Կարապետյան, Գ. Աղուզումցյան, Ս. Սիսյան, Ա. Հովհաննիսյան, Լ. Նազարյան, Մ. Գևորգյան, Գ. Եգանյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել Հ. Թադևոսյանին խնդրահարույց 3 աշխատանքները վերահսկել: Անցկացնել ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների 1-ին փուլը ս/թ ապրիլի 14-16-ը:

2. ԼՍԵՑԻՆ - Դասընթացների անցկացման ձևերի հստակեցման մասին /առցանց, առերես/:

Ա. Թոփուզյան – Նախորդ շաբաթ ռեկտորատի նիստում դեկաններին հանձնարարվել էր հաղորդում տալ իրենց ֆակուլտետում դասընթացների անցկացման ձևերի վերաբերյալ: Այսինքն, ներկայացնել ինչպես է շարունակվելու դասընթացների կազմակերպումը՝ առցանց, թե առերես: Կուլտուրայի, բանասիրական և սկզբնական կրթության ֆակուլտետների դեկանները հայտնել են, որ իրենց ֆակուլտետներում դասերը շարունակվելու են 2 եղանակով՝ և՛ առցանց, և՛ առերես: Մյուս բոլոր ֆակուլտետներում դասերը շարունակվելու են առցանց մինչև ս/թ ապրիլի 12-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել բոլոր դասախոսներին երկու օրվա ընթացքում մեկ անգամ ևս ճշտել իրենց դեկանատներում դասընթացների անցկացման ձևերը և հաղորդել ամբիոն:

3. ԼՍԵՑԻՆ - Պրակտիկայի ընթացքի մասին /զեկուցող՝ Գ. Հարությունյան/:

Գ. Հարությունյան – Հեռակա ուսուցման կրթական ծրագրի պրակտիկաներն արդեն ավարտվել են, մասնավորապես, դա վերաբերում է սոցիալական մանկավարժություն հեռակա բակալավր 4-րդ կուրսին, որն իրականացվել է թիվ 2 մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում առցանց եղանակով, մեթոդիստ՝ Ա. Հովհաննիսյան: Ունեցել ենք մանկավարժական պրակտիկա սոցիալական մանկավարժություն հեռակա բակալավր 3-րդ կուրսում, որի պրակտիկան իրականացվել է թիվ 104 հիմնական դպրոցում, մեթոդիստ՝ Գ. Աղուզումցյան: Պրակտիկայի պաշտպանությունը նախատեսված է իրականացնել ս/թ. ապրիլի 9-ին առցանց եղանակով: Ս/թ. մարտի 30-ին ավարտվեց նաև ՍԿ ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողների մանկավարժահետազոտական պրակտիկան, որն իրականացվեց բակալավրի հենքի վրա՝ առցանց եղանակով: Մագիստրոսներին տրվել է 2 շաբաթ ժամանակ թղթապանակները պատրաստելու և հարթակում ներբեռնելու համար:

Ընթացքի մեջ է գտնվում ԿՀՍ ֆակուլտետի սոցիալական մանկավարժություն առկա բակալավր 2-րդ կուրսի շարունակական պրակտիկան, որն իրականացվում է թիվ 125 դպրոցում: Պրակտիկայի մեթոդիստն է Գ. Աղուզումցյանը, մանկավարժը՝ Ս. Սիսյանը:

Ս/թ. մարտի 29-ին մեկնարկել է ԿՀՍ ֆակուլտետի սոցիալական մանկավարժություն առկա բակալավր 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան: Այն իրականացվում է ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնում, մեթոդիստ՝ Գ. Եգանյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Գ. Հարությունյանի հաղորդումն ընդունել ի գիտություն: Հանձնարարել մեթոդիստներին և մանկավարժներին հատուկ ուշադրություն դարձնել պրակտիկայի հետազոտական բաղադրիչի որակական կողմի կատարելագործմանը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՑԱՐԱՁՅԱՆ

31.03.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Ասպիրանտուրայում դասավանդվող «Մանկավարժություն» առարկայի որակավորման քննության հարցաշարի հաստատման մասին:
2. Մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների թեզերի և առկա բակալավր 4-րդ ու հեռակա բակալավր 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների արդյունքների մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Ասպիրանտուրայում դասավանդվող «Մանկավարժություն» առարկայի որակավորման քննության հարցաշարի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Վերանայվել և արդիականացվել է «Մանկավարժություն» առարկայի որակավորման քննության հարցաշարը: Այն բաղկացած է 100 հարցից և համապատասխան գրականության ցանկից: Հարցաշարն ընդգրկում է առարկայի ամբողջ բովանդակությունը: Առաջարկում եմ հաստատել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –Լ. Ասատրյան, Հ. Թադևոսյան, Լ, Պողոսյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել «Մանկավարժություն» առարկայի որակավորման քննության հարցաշարը և ներկայացնել ասպիրանտուրայի բաժին:

2.ԼՍԵՑԻՆ - Մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների թեզերի և բակալավր 4-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյան, Լ. Ասատրյան, Ն. Կարապետյան, Գ. Հակոբյան, Լ. Պողոսյան, Ի. Բաբայան, Ս. Սիսյան, Հ. Թադևոսյան, Ա. Դալլաքյան, Գ. Աղուզումցյան, Մ. Գևորգյան, Ն. Կարապետյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Թույլատրել ներքոհիշյալ ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հրապարակային պաշտպանությունը:

ՍԿ, առկա բակ. 4-րդ կուրս			
Հ/հ	Ավարտական աշխատանքի Թեմա	Ուսանողի անուն ազգանուն	Գիտական ղեկավար
1.	Էքսկուրսիաների դերը կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության գործում:	Մանուկյան Վարդ	Լ. Ասատրյան
2.	Կրտսեր դպրոցականների քաղաքացիական դաստիարակության իրականացման մանկավարժական պայմանները:	Դարբինյան Սիլվա	Լ. Ասատրյան
3.	Ուսումնառության առաջին շրջանում կրտսեր դպրոցականի դժվարությունների հաղթահարման միջոցները:	Մարտիրոսյան Գոհար	Գ. Հակոբյան
4.	Տարրական դպրոցում մեդիառեսուրսների կիրառմամբ դիդակտիկ խ աղերի նախագծում մասնագիտական առարկայի շրջանակներում:	Սարոյան Նարե	Ն. Կարապետյան
5.	Տարրական դպրոցում ինտեգրված դասերի նախագծում միջառարկայական կապերի ապահովմամբ:	Սարգսյան Աննա	Ն. Կարապետյան
6.	Թանգարանային մանկավարժությունը որպես կրտսեր դպրոցականների հայրենասիրական դաստիարակության միջոց:	Մեսրոպյան Արմինե	Լ. Պողոսյան

ՍԿ, առկա մագ. 2-րդ կուրս			
Հ/հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Էկոլոգիական կրթության բովանդակությունը և ձևերը տարրական դպրոցում:	Ավդալյան Հռիփսիմե	Ի. Բաբայան
2.	Առողջագիտական դաստիարակության իրականացման ուղիները տարրական դպրոցում:	Դանիելյան Մերի	Ի. Բաբայան
3.	Կրտսեր դպրոցականի հաղորդակցական կարողությունների ձևավորումը:	Սարգսյան Սեդա	Ի. Բաբայան
4.	Ուսուցչի մանկավարժական վարպետության ձևավորման գործընթացը տարրական դպրոցում:	Միդեյան Իրինա	Ս. Սիսյան
5.	Կրտսեր դպրոցականների պատասխանատու վարքի ձևավորման մանկավարժական պայմանները:	Երոյան Արփինե	Գ. Աղուզումցյան
6.	Քաղաքացիական դաստիարակության խնդիրները տարրական դպրոցում:	Հովհաննիսյան Իրա	Գ. Աղուզումցյան
7.	Տարրական դպրոցում սովորողների մեդիագրագիտության իրականացման մանկավարժական պայմանները:	Անտոնյան Լիլիթ	Հ. Թադևոսյան
8.	Մանկական գրականության վերլուծության միջոցով կրտսեր դպրոցականների բարոյական	Պողոսյան Շուշան	Ա. Դալլաքյան

	որակների ձևավորման մանկավարժական պայմանները:		

ՍԿ, հեռակա բակ. 5-րդ կուրս			
Հ/հ	**Ավարտական աշխատանքի Թեմա**	**Ուսանողի անուն ազգանուն**	**Գիտական ղեկավար**
1.	Սովորողների ազգային ինքնագիտակցության ձևավորման ուղիները տարրական դպրոցի ուսուցման գործընթացում:	Ստեփանյան Լիլիթ	Մ. Գևորգյան
2.	Սովորողների բազմամշակութային դաստիարակության միջոցները տարրական դպրոցի ուսուցման գործընթացում:	Մուրադյան Կարինե	Մ. Գևորգյան
3.	Էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների կիրառումը տարրական դպրոցում:	Սիմոնյան Լուսինե	Ն. Կարապետյան

ԿՀՍ, առկա բակ. 4-րդ կուրս			
Հ/հ	**Ավարտական աշխատանքի Թեմա**	**Ուսանողի անուն ազգանուն**	**Գիտական ղեկավար**
1.	Սովորողների սոցիալականացման գործընթացի դինամիկան 1-4-րդ դասարաններում:	Մարգարյան Օֆելյա	Հ. Թադևոսյան
2.	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամատարության իրականացման առանձնահատկությունները ՀՀ-ում:	Գասպարյան Աննա	Հ. Թադևոսյան
3.	Ավանդական և ընտանիքանման մոդելի մանկատներում սաների սոցիալականացման առանձնահատկությունների համեմատական վերլուծություն:	Շահբազյան Լիլիթ	Հ. Թադևոսյան
4.	Հեռուստատեսային մանկապատանեկան հաղորդումների ազդեցությունը դեռահասների սոցիալականացման վրա:	Բաջախյան Սիլվարդ	Ն. Մարկոսյան
5.	Սոցիալական մանկավարժի խորհրդատվական աշխատանքը ծնողների հետ:	Թոսունյան Լիանա	Ն. Մարկոսյան
6.	Կրտսեր դպրոցականների նախապատրաստումը տարաբնույթ արտակարգ իրավիճակներին:	Բարսեղյան Լիանա	Ն. Մարկոսյան
7.	Սոցիալական մանկավարժի աջակցությունը մասնագիտական կողմնորոշման գործում:	Գյոզալյան Մարինե	Լ. Նազարյան
8.	Ժամանակակից ընտանիքի դերը երեխայի զարգացման գործում:	Թաթոյան Անի	Լ. Նազարյան
9.	Դեռահասների վարքային շեղումների կանխարգելումը:	Հակոբյան Սոֆիկ	Լ. Նազարյան

10.	Տարրական դպրոցի աշակերտական կոլեկտիվի ձևավորման սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրը առցանց ուսուցման համակարգում:	Մելքոնյան Տաթևիկ	Գ. Հարությունյան
11.	Սոցիալական մանկավարժի աշխատանքը մեծահասակների կրթության ոլորտում:	Հայրապետյան Սոֆյա	Գ. Հարությունյան
12.	Սոցիալական մանկավարժի աշխատանքը ապահարմարված երեխաների հետ:	Ջոանա Ղոմաջյան	Ա. Հովհաննիսյան
13.	Մուլտֆիլմերի ազդեցությունը երեխայի դաստիարակության գործում:	Սոնա Խաչատրյան	Ա. Հովհաննիսյան
14.	Երեխաների սոցիալ- մանկավարժական աջակցությունը խնամատար ընտանիքներում:	Խաչատրյան Շողիկ	Ա. Դալլաքյան
15.	Կրտսեր դպրոցականների սոցիալ-անձնային զարգացման մանկավարժական պայմանները:	Բալոյան Տանյա	Ա. Դալլաքյան
16.	Ապագա սոցիալական մանկավարժների մասնագիտական ինքնորոշման հիմնախնդիրը դպրոց-բուհ համագործակցության շրջանակում:	Հայրապետյան Աննա	Գ. Եգանյան
17.	Արտադպրոցական կրթադաստիարակչական գործունեության դերը տարրական դպրոցի սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում:	Ավետիսյան Ալինա	Գ. Եգանյան
18.	Սոցիալ-մանկավարժական գործունեությունը Հայ օգնության ֆոնդի երեխաների աջակցության կենտրոնում:	Սահակյան Ռուզաննա	Գ. Եգանյան

ԿՀՍ, հեռակա բակ. 5-րդ կուրս			
Հ/հ	**Ավարտական աշխատանքի Թեմա**	**Ուսանողի անուն ազգանուն**	**Գիտական ղեկավար**
1.	Մանկավարժական բուհի ուսանողների հանդուրժողականության զարգացման սոցիալ-մանկավարժական ուղիները:	Բաղինյան Անի	Հ. Թադևոսյան
2.	Կամավորության զարգացման ուղիները այլընտրանքային խնամքի կազմակերպման համակարգում:	Ասատուրյան Լիաննա	Հ. Թադևոսյան
3.	Մասնավոր և պետական դպրոցներում սովորողների սոցիալականացման առանձնահատկությունների համեմատական վերլուծություն:	Արմիյանց Մարիամ	Հ. Թադևոսյան
4.	Սոցիալական մանկավարժի աշխատանքը կրտսեր դպրոցականների ուսման մոտիվացիայի բարձրացման գործում:	Այվազյան Սաթենիկ	Գ. Եգանյան
5.	Սոցիալ-մանկավարժական աջակցության ձևերը ժամանակակից ընտանիքին:	Հարոյան Անահիտ	Գ. Աղուզումցյան

6.	Հատուկ կարիք ունեցող երեխաներին հասարակության մեջ ինտեգրելու խնդիրը:	Կարապետյան Անի	Գ. Աղուզումցյան
7.	Սոցիալական մանկավարժի աշխատանքը ռիսկի խմբի երեխաների հետ:	Գեղամյան Ասյա	Ա. Հովհաննիսյան
8.	Սոցիալական մանկավարժի աշխատանքը օժտվածություն ունեցող երեխաների հետ:	Աղաջանյան Սեդա	Ա. Հովհաննիսյան
9.	Սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները տեղահանված ընտանիքների հետ:	Մկրտչյան Նազելի	Ն. Մարկոսյան
10.	Պատերազմական /հետպատերազմական/ ժամանակաշրջանում սոցիալական մանկավարժի կողմիցիրականացվող աշխատանքը փախստականների ընտանիքների հետ:	Ղազարյան Պավել	Լ. Պողոսյան
11.	Սոցիալական մանկավարժի աշխատանքը ընտանիքում դաստիարակության հումանացման ուղղությամբ:	Կարապետյան Գայանե	Լ. Պողոսյան
12.	Սոցիալական մանկավարժի աշխատանքը առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հետ:	Պատուրյան Քրիստինա	Ս. Սիսյան
13.	Սոցիալ-մանկավարժական խորհրդատվության կիրառման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում:	Սարգսյան Գայանե	Ս. Սիսյան

ԿՀՍ, առկա մագ. 2-րդ կուրս			
Հ/հ	**ԹԵՄԱ**	**ԿԱՏԱՐՈՂ**	**ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ**
1.	Կրտսեր դպրոցականների համակարգչային խաղերից կախվածությունը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր:	Գայանե Ավետիսյան	Գ. Հարությունյան
2.	Սոցիալական մանկավարժի աշխատանքը ԿԱՊԿՈՒ երեխաների հետ:	Շուշան Միքայելյան	Ն. Մարկոսյան

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

15.04.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Ամբիոնի մ.գ.թ., դասախոս Գայանե Գագիկի Եգանյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորություն տալու մասին:
2. Ատեստավորման ենթակա ուսուցիչների պարտադիր վերապատրաստման մասին:
3. Սեմինար «ՀՀ քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության 1-ին գլխի վերաբերյալ: /զեկ. Միշա Թադևոսյան/

1. ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի մ.գ.թ., դասախոս Գայանե Գագիկի Եգանյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորություն տալու մասին:

Ա. Թոփուզյան - Գ. Եգանյանը 2009-2012թթ. աշխատել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Մանկավարժության միջֆակուլտետային ամբիոնում որպես դասախոս, այնուհետև՝ 2012–2019թթ. Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դասախոս: 2019թ.-ից մինչ օրս հանդիսանում է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Մանկավարժության ամբիոնի դասախոս:

2015թ.-ին «Մանկավարժություն-020» մասնագիտական խորհրդի որոշմամբ Գ. Եգանյանին շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (մասնագիտությունը՝ ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»):

Նա 25 գիտական հոդվածների հեղինակ է, որոնցից 13-ը տպագրվել են թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո, դրանցից էլ 3-ը տպագրված են ցիտման «ринц» համակարգում ընդգրկված ամսագրերում:

2020թ.-ին Գ. Եգանյանը հրատարակել է նաև «Մանկավարժական դիագնոստիկա» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը:

Ատենախոսության պաշտպանությունից հետո նա ղեկավարել է 8 մագիստրոսական հետազոտական աշխատանք և 2 ավարտական աշխատանք «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության գծով: Ներկա պահին ղեկավարում է 2 մագիստրոսական աշխատանք և 4 ավարտական աշխատանք «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության գծով: Ղեկավարել և հիմա էլ ղեկավարում է բակալավրի կրթական ծրագրի շրջանակում կուրսային աշխատանքներ, ինչպես նաև բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի շրջանակներում մանկավարժական, ուսումնաճանաչողական և հետազոտական պրակտիկաներ:

Մասնակցել է մանկավարժական կադրերի վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման շուրջ մեկ տասնյակ դասընթացների, հանրապետական և միջազգային երկու տասնյակ գիտագործնական մասնագիտական համաժողովների և վեբինարների:

Ներգրավված է եղել ամբիոնի կողմից կազմակերպված գիտաժողովներում և այլ գիտական ու գիտաուսումնական ծրագրերում: Իրականացրել է ուղղորդիչ-քարոզչական աշխատանքներ՝ ներկայացնելով ՀՊՄՀ-ի վերջին տարիների նշանակալի ձեռքբերումները:

2012-2019թթ. հանդիսացել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի արհեստակցական կազմակերպության՝ արհկոմիտեի անդամ և Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի արհմբյուրոյի նախագահ, 2019թ-ից մինչ օրս էլ, անդամակցելով ՀՊՄՀ-ի արհեստակցական կազմակերպությանը, հանդիսանում է Մանկավարժության ամբիոնի արհմբյուրոյի նախագահ:

2014-2019թթ. եղել է ՀՀ նախագահին կից հանրային խորհրդի անդամ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ասատրյանը, Ա. Հովհաննիսյանը, Ն. Մարտիրոսյանը, Ս. Սիսյանը, Գ. Հակոբյանը, Գ. Աղուզումցյանը, Ա. Դալլաքյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՊՄՀ-ի գիտական խորհուրդ ներկայացնել մ.գ.թ., դասախոս Գայանե Գագիկի Եգանյանի թեկնածությունը՝ նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

2. ԼԱԵՑԻՆ - Ատեստավորման ենթակա ուսուցիչների պարտադիր վերապատրաստման մասին:

Ա. Թոփուզյան - Մեր համալսարանը դիմելու է ուսուցիչների վերապատրաստման մրցույթին մասնակցելու համար: Արդեն ստեղծվել է վերապատրաստումների ծրագիրը և մեր ամբիոնին տրվել է 2 մեծ բաժին՝ կառավարումը, որի ծրագիրը կազմել է Լ. Ասատրյանը և գնահատումը, որի ծրագիրը կազմել է Լ. Պողոսյանը: Ովքեր կցանկանան մասնակցել վերապատրաստման գործընթացին այս երկու ուղղություններով, խնդրում ենք դիմել ամբիոն: CV-ները ուղարկել ամբիոն՝ համապատասխան ձևաչափով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ուսուցիչների վերապատրաստմանը մասնակցել ցանկացող դասախոսների ցանկը և CV-ները ուղարկել ամբիոն մինչև 30.04.2021թ.:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

28.04.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Ամբիոնի դասախոսների 2021թ. տպագրված և տպագրության հանձնված հոդվածների մասին:
2. «Սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցությունը մանկության վրա. մարտահրավերներ և լուծումներ» խորագրով գիտաժողովի կազմակերպման մասին:
3. Քարոզների ավանդական մրցույթի կազմակերպման մասին: /զեկուցող՝ Լ. Պողոսյան/
4. ´´Մանկավարժ 2021´´ միջազգային մրցույթի անցկացման մասին:
5. «Մանկավարժություն» առարկայի ասպիրանտուրայի ընդունելության քննության հարցաշարի հաստատման մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Ամբիոնի դասախոսների 2021թ. տպագրված և տպագրության հանձնված հոդվածների մասին:

Ա. Թոփուզյան – Սիրելի դասախոսներ, մենք ուսումնասիրել ենք 2021թ. հրատարակված և ընթացքի մեջ գտնվող հոդվածների մասին Ձեր ներկայացրած տեղեկատվությունը: Հիմնականում հոդվածները գտնվում են տպագրության ընթացքի մեջ: Հրատարակված հոդվածները շատ քիչ են: Հիշեցնում եմ, որ մեկ տարվա ընթացքում յուրաքանչյուր դասախոս պետք է ունենա առնվազն 2 տպագրված հոդված: Կան դասախոսներ, ովքեր հոդվածներ են ներկայացրել մեր բուհի «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» խորագրով հանդեսում, սակայն ոչ բոլորը: Խնդրում եմ մինչև տարվա վերջ բոլոր դասախոսները ներկայացնեն մեկական հոդված վերոնշյալ ամսագրում տպագրելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել Է. Յարազյանին 2021թ. դեկտեմբերին ամբողջական տեղեկատվություն տալ ամբիոնի դասախոսների կողմից տպագրված հոդվածների մասին:

2. ԼՍԵՑԻՆ - «Սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցությունը մանկության վրա. մարտահրավերներ և լուծումներ» խորագրով գիտաժողովի կազմակերպման մասին:

Ա. Թոփուզյան – Ս/թ նոյեմբեր ամսին նախատեսում ենք անցկացնել «Սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցությունը մանկության վրա. մարտահրավերներ և լուծումներ» խորագրով հանրապետական գիտաժողով: Ձեզ կուղարկենք գիտաժողովի տեղեկատվական նամակը, որում հստակ ներկայացված են գիտաժողովի թեմատիկ ուղղությունները, անցկացման պայմանները, հոդվածներին ներկայացվող պահանջները և մասնակցության հայտի ձևաչափը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել Լ. Պողոսյանին գիտաժողովի տեղեկատվական նամակը ուղարկել հանրապետության մանկավարժներ պատրաստող այլ բուհերին ևս: Մեր ամբիոնի դասախոսների մասնակցության հայտը ներկայացնել մինչև 2021թ. հունիսի 25-ը, իսկ հոդվածները՝ մինչև ս/թ սեպտեմբերի 15-ը:

3. **ԼՍԵՑԻՆ -** Քարոզների ավանդական մրցույթի կազմակերպման մասին:

Լ. Պողոսյան - Հունիսի 1-ին կազմակերպվում է արդեն ավանդույթ դարձած քարոզների մրցույթը՝ «Մանկության ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով, որը նվիրված է երեխաների իրավունքների պաշտպանության օրվան: Միջոցառումը տեղի կունենա առցանց ձևաչափով: Մասնակիցները պետք է ընտրեն կամ նկարեն մանկության ժամանակակից հիմնախնդիրներին վերաբերող որևէ նկար և դրան համապատասխան գրեն քարոզ–կոչ ուղղված մեծահասակներին: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև մայիսի 15-ը ներկայացնել մասնակցության հայտը: Նկարն ու քարոզ–կոչի տեքստը անհրաժեշտ է ներկայացնել մայիսի 24-ին: Հայտարարության մեջ մանրամասն ներկայացված է քարոզին ներկայացվող պահանջները և գնահատման չափանիշները: Հաղթող ուսանողը հնարավորություն կունենա իր քարոզ–կոչը տպագրելու «Մանկավարժական Համալսարան» թերթում:

Ա. Թոփուզյան – Խնդրում եմ ի նկատի ունենալ, որ այս ձևով մենք սովորեցնում ենք ուսանողներին ակտիվ քաղաքացիներ լինել, հրապարակային ելույթ ունենալ, առաջնայինը երկրորդականից տարբերել, համաձայն թեմայի և լսարանի ելույթ կառուցել, որոշակի անձնային որակներ և արժեքներ ենք ձևավորում նրանց մեջ: Այս ամենը հեշտ չէ անել ու

քարոզների մրցույթը ես արժևորում եմ հենց այս տեսանկյունից: Ուստի խնդրում եմ աշխատեք ուսանողների հետ՝ քարոզները պատրաստելու ուղղությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Քարոզների մրցույթի մասին հայտարարել բոլոր կուրսերում, ուղղորդել և օգնել ուսանողներին սահմանված ժամկետում պատրաստել նկարներն ու քարոզը մրցույթին մասնակցելու համար::

4. ԼՍԵՑԻՆ - ´´Մանկավարժ 2021´´ միջազգային մրցույթի անցկացման մասին:

Ա. Թոփուզյան – ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից ստացել ենք գրություն ´´Մանկավարժ 2021´´ միջազգային մրցույթի մասին: Մրցույթի վերաբերյալ նամակը ուղարկվել է նաև Ձեզ: Խնդրում եմ ուսումնասիրել կցված տեղեկատվական նամակը և մասնակցության ցանկության դեպքում համապատասխան տեղեկատվություն ուղարկել ամբիոն:

ՈՐՈՇԵՑԻՆ - ´´Մանկավարժ 2021´´ միջազգային մրցույթին մասնակցելու համար ամբիոնի դասախոսների ցանկը կազմել մինչև 17.05.2021թ., քննարկել և ներկայացնել գիտահետազոտական կենտրոն:

5. ԼՍԵՑԻՆ - «Մանկավարժություն» առարկայի ասպիրանտուրայի ընդունելության քննության հարցաշարի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Վերանայվել և արդիականացվել է «Մանկավարժություն» առարկայի ընդունելության քննության հարցաշարը: Այն բաղկացած է 92 հարցից և համապատասխան գրականության ցանկից: Առաջարկում եմ հաստատել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Պողոսյան, Լ. Ասատրյան, Ա. Մանուկյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել «Մանկավարժություն» առարկայի ընդունելության քննության հարցաշարը և ներկայացնել ասպիրանտուրայի բաժին՝ կայքում տեղադրելու համար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

12.05.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Ն.Մարկոսյանի <<Մանկավարժի պրակտիկ աշխատանքի ուղեցույց>> խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:
2. «Մանկության ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով քարոզ-մրցույթի արդյունքների մասին:
3. Պետական ավարտական քննությունների արդյունքների մասին:
4. 2020-2021 ուս. տարվա հաշվետվությունները ներկայացնելու մասին:

ԼՍԵՑԻՆ - Ն.Մարկոսյանի <<Մանկավարժի պրակտիկ աշխատանքի ուղեցույց>> խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:

Ն. Մարկոսյան – Ձեռնարկը մեկ անգամ քննարկվել է ամբիոնում և գրախոսների կողմից ներկայացրած դիտարկումները և առաջարկությունները օգնել են ինձ այն կատարելագործելու ու ավելի ամբողջական դարձնելու համար: Կցանկանամ հակիրճ անդրադառնալ որոշ դիտողությունների, որոնք շտկել եմ: Որոշ գլուխներում կատարել եմ բովանդակային լրացումներ, օրինակ, 1-ին գլխում մեր կողմից իրականացված հետազոտությունների վերլուծություն եմ ավելացրել, 6-րդ գլխում տիկին Մարտիրոսյանի առաջարկով ավելացրել եմ ‹‹Ներառական կրթության համատեքստում ուսուցչի, ուսուցչի օգնականի և սոցիալական մանկավարժի գործունային պարտականությունների համեմատական վերլուծություն›› ենթագլուխը: Գրեթե բոլոր գլուխներում նոր գործնական աշխատանքներ, հարցարաններ, թեստեր, մեթոդիկաներ եմ ավելացրել:

Գ. Աղուզումցյան - Սույն աշխատանքը ընթերցել եմ երկրորդ անգամ և կրկին այն դրական կարծիքին եմ, որ աշխատանքի արդիականությունն ու կարևորությունը տրամաբանորեն բխում են խորագրից և շեշտադրում է մանկավարժի պրակտիկ

աշխատանքը: Ն. Մարկոսյանը կատարել է ծավալուն աշխատանք, կատարել է փոփոխություններ, լրացումներ, ավելացրել աղյուսակներ, տրամագրեր, գծագրեր, մանկավարժների մասնագիտական մոտիվացիայի բացահայտման հարցաթերթիկ՝ հաշվի առնելով մեր կողմից արված դիտողությունները: Այսօր ցավոք ունենք որոշակի բացթողումներ գիտելիքների գործնականության և մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման գործընթացում: Ուստի Մարկոսյանի ուսումնամեթոդական ձեռնարկը կարող է օգտակար լինել այդ բացը լրացնելու գործում, քանի որ այն պարունակում է, ինչպես տեսական մեկնաբանություններ, այնպես էլ պրակտիկ խորհուրդներ, գործնականում անհրաժեշտ մեթոդիկաներ, թեստեր, հարցարաններ, որոնք օգտակար կլինեն, ինչպես սկսնակ, այնպես էլ բազմավաստակ ուսուցիչներին և մանկավարժական բուհի շրջանավարտներին: Առաջարկում եմ Ն.Մարկոսյանի <<Մանկավարժի պրակտիկ աշխատանքի ուղեցույց>> խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Ն. Մարտիրոսյան - Արժևորելով կատարած աշխատանքը՝ ուզում ենք փաստել, որ հեղինակը շտկել է մեր կողմից արված դիտողությունները, որոնք ներկայացրել էինք մեր՝ 26.06.2020թ.-ի ձեռնարկի առաջին գրախոսության մեջ:

Աշխատանքում բացակայող հղումները ներառված են, ուղղվել են մեր կողմից նշված կետադրական, համակարգչային շարվածքի բացթողումները, տառասխալները, որոշ օտարատերմին հասկացություններ փոխարինվել են հայերեն անվանումներով: Աշխատանքում ներառվել են դպրոցում աշխատող ժամանակակից ուսուցչի, ուսուցչի օգնականի պաշտոնային պարտականությունների մասին նյութեր, կատարվել է համեմատություն նրանց գործունային պարտականությունների միջև՝ ներառական կրթության համատեքստում:

Ն. Մարկոսյանի «Մանկավարժի պրակտիկ աշխատանքի ուղեցույց» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը համապատասխանում է նմանօրինակ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, այն ունի գործնական նշանակություն թե՛ գործող մանկավարժների համար, և թե՛ մանկավարժական բուհի ուսանողների համար, ուստի կարծում եմ կարելի է երաշխավորել հրատարակության:

Ն. Կարապետյան - Ձեռնարկում հեղինակը քննարկել է մի շարք թեմաներ, որոնք ընդհանուր առմամբ բխում են առաջադրված նպատակից:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ձեռնարկում անդրադարձ է կատարվել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ մանկավարժի աշխատանքի որոշ տեսակետներին:
Մեր կարծիքով ողջունելի է հայալեզու ցանկացած ձեռնարկ հեղինակելու գաղափարը, որը կհամալրի պրակտիկ մանկավարժների մասնագիտական գրադարանը:

Այսպիսով, Նարինե Մարկոսյանի «Մանկավարժի պրակտիկ աշխատանքի ուղեցույց» ուսումնամեթոդական ձեռնարկը կարելի է երաշխավորել հրատարակության:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյան, Լ. Ասատրյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Նարինե Մարկոսյանի «Մանկավարժի պրակտիկ աշխատանքի ուղեցույց» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

2.ԼՍԵՑԻՆ - «Մանկության ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով քարոզ-մրցույթի արդյունքների մասին:

Լ. Պողոսյան - Արդեն 9-րդ տարին է անցկացնում ենք մանկության հիմնախնդիրներին վերաբերող քարոզ-մրցույթը: Այս տարի այն անցկացվեց առցանց ձևաչափով: Մրցույթի մասնակցության հայտ էին ներկայացրել բուհի 6 ֆակուլտետից 42 ուսանող, որից ընտրվել էր 13-ը: Ուսանողներն իրենց քարոզներում անդրադարձել էին առօրյայում հանդիպող ամենաէական խնդիրներին՝ փորձելով մեծերի ուշադրությունը կենտրոնացնել գոյություն ունեցող մանկության խնդիրների և դրանց լուծման ուղիների վրա: Քարոզներում կարևորվեցին նաև երեխային գովելու, նրա հետ զբաղվելու ժամանակ տրամադրելու, նրան չնվաստացնելու և նրա հետ ընկերանալու անհրաժեշտության հարցերը: Մրցույթի ավարտին հանձնաժողովն ամփոփեց արդյունքները. 2-րդ տեղին արժանացան Օտար լեզուների ֆակուլտետի ուսանողուհիներ Էլեն Խալաթյանն ու Արմինե Թաթոյանը, իսկ 3-րդ տեղում էին Սկզբնական կրթության ֆակուլտետից Սուսաննա Եղիազարյանը, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետից Անահիտ Բաղդասարյանը և

Գեղարվեստական կրթության ֆակուլտետից Անահիտ Ադամյանը: Այս տարի մրցույթում 1-ին տեղ զբաղեցնող մասնակից չունեցանք:

Ա. Թոփուզյան - Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Լ. Պողոսյանին մրցույթը պատշաճ կերպով կազմակերպելու համար: Շնորհակալություն եմ հայտնում հանձնաժողովի անդամներին՝ Լ. Պողոսյան, Ա. Մանուկյան, Լ. Նազարյան, Ս. Ասրյան, ուսանողուհի Հ. Հովհաննիսյան, քարոզները լսելու և օբյեկտիվ գնահատելու համար: Տեղեկացնում եմ նաև, որ բոլոր մասնակիցները կստանան հավաստագրեր, իսկ 2-րդ և 3-րդ տեղ զբաղեցրած մասնակիցները՝ պատվոգրեր: Բացի այդ, 2-րդ և 3-րդ տեղ զբաղեցրած մասնակիցների քարոզները կտպագրվեն ‹‹Մանկավարժական համալսարան›› պաշտոնաթերթի առաջիկա համարում:

Այս տարի քարոզների մրցույթն ամփոփեցինք մեր ամբիոնի ասպիրանտ Միշա Թադևոսյանի քարոզով, ով քարոզների մրցույթի 1-ին տարվա հաղթողն է: Նրա քարոզ-կոչը ուղղված էր ապագա մանկավարժներին, իսկ քարոզի բովանդակությունը համեմված էր իր ուսանողական տարիների փորձառությունից բխող դրույթներից:

ՈՐՈՇԵՑԻՆ – Շնորհակալություն հայտնել Լ. Պողոսյանին քարոզների ավանդական մրցույթը կազմակերպելու համար: Խնդրել ՛՛Մանկավարժական համալսարանի՛՛ խմբագիր Ս. Ասրյանին՝ տպագրելու հաղթողների քարոզները:

3.ԼՍԵՑԻՆ - Պետական ավարտական քննությունների արդյունքների մասին:

Ա. Թոփուզյան – Ավարտվեցին բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները: Ընդհանուր առմամբ աշխատանքների որակը բարձրացել է, բայց ոչ բոլոր աշխատանքներն են ամբողջական և օրիգինալ: Այս տարի բավականին օբյեկտիվ էին մեր ամբիոնի ղեկավարների և գրախոսների կարծիքները, որոնցում կային և՛ դիտողություններ, և՛ առաջարկություններ: Սակայն մեր ուսանողները չէին կարողանում պատասխանել ընդդիմախոսների դիտողություններին: Սահիկահանդեսները հիմնականում լավ էին ձևավորված, սակայն ոչ բոլոր ուսանողները կարողացան իրենց տրված ժամանակը ճիշտ բաշխել: Որոշ ուսանողներ գիտափորձն ու հետազոտական աշխատանք

հասկացությունները շփոթում էին: Հաճախ նշվում է, որ շրջանավարտը կատարել է փորձարարական աշխատանք, գիտափորձ, սակայն իրականում կատարել է էմպիրիկ մեթոդներով հետազոտություն, որն էլ անհրաժեշտ է նման աշխատանքի կատարման համար: Մենք պետք է հստակ հասկանանք և ուսանողներին բացատրենք, որ մեկ, երկու տարվա ընթացքում հնարավոր չէ գիտափորձ կատարել: Որոշ աշխատանքներում ղեկավարի և ընդդիմախոսի գնահատականները չէին համապատասխանում ուսանողի ստացած գնահատականին, խնդրում եմ հաջորդ տարի լինել ավելի օբյեկտիվ: /գնահատականները կցվում են/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Պողոսյան, Մ. Գևորգյան, Գ. Աղուզումցյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Ա. Թոփուզյանի հաղորդումն ընդունել ի գիտություն: Նշված թերությունները հաշվի առնել հետագա աշխատանքում:

4.ԼՍԵՑԻՆ - 2020-2021 ուս. տարվա հաշվետվությունները ներկայացնելու մասին:

Ա. Թոփուզյան – Խնդրում եմ պատրաստել և ամբիոն ուղարկել 2020-2021 ուս. տարվա Ձեր հաշվետվությունները: Հաշվետվությունները պատրաստելիս ինքնաքննադատաբար վերաբերվեք Ձեր կատարած աշխատանքին, հատկապես դասավանդած առարկաներին և դրանց արդյունքներին:

ՈՐՈՇԵՑԻՆ - 2020-2021 ուս. տարվա հաշվետվությունները ներկայացնել մինչև 30.06.2021թ.:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

09.06.2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի ՆԻՍՏԻ

1. ԼՍԵՑԻՆ - Մանկավարժության ամբիոնի ասպիրանտ Անահիտ Հովակիմյանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Լ. Պողոսյանը

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել Անահիտ Հովակիմյանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ «Հակակոռուպցիոն կրթության կազմակերպման առանձնահատկությունները մանկավարժական կրթության ոլորտում»: Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Թոփուզյանին:

2. ԼՍԵՑԻՆ - Մանկավարժության ամբիոնի հայցորդ Շուշանիկ Ղահրամանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Ա. Մանուկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել Շուշանիկ Ղահրամանյանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ «Գնահատման ժամանակակից համակարգի հիմնախնդիրը տարրական դպրոցում»: Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Մանուկյանին:

Ամբիոնի նիստի 23 անդամներից ներկա էին 23-ը, որից կողմ քվեարկեց 23-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

02.07.2021թ.